1
6
2000

15-ահ 6ագ

# ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

## Քրիստոնէական։

Գերադանցապատուելոյ Կարտինալին
Տեառն Ռուպերթոսի
Պէլլարմինոսի։

Թարգմանեցեալ 'ի Բարսեղ Վար
դապետէ Կոստանդնուպօլսեցւոյ,
'ի լեզուէ Իտալականէ 'ի Հայկա
կան բարբառ

8236-57

Յամի Տեառն. 1669 Հոկտեմբերի
երեսուն
Յալիկոռնա

-26

8236-57

ՊԵՏ.ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Տպեցաւ Տառս Աստուածային
Յամին, որ 'ի ծնընդենէ Տ՟ն
մերոյ Յ՟ի Ք՟ի, Հազար
և Վեց հարիւր
և Եօթանա
սուն:

'Ի Թուականութեանս Հայոց՝
Հազարի, Հարիւրի, և Տասն
և ըննի:

Յուլիկօնոյ:

'Ի քաղաքս մեծ[illegible] Ա[illegible]


INRI

# ՊԱՐԶԱԲԱ՛ՆՈՒԹԻՒՆ

Քրիստոնէականի վարդապետու-
թե. ՚ի պէտս այնոցիկ. որք ուսու-
ցանեն զմանկունս և զայլս անձինս
պարզամիտս: Շարադրեցեալ ըն-
կերոյն տրամախօսութե:

ԶԻՆՉԻՑԷ
քրիստոնէական վարդա
պետութին. և որք իցեն
մասունք նորին գլխաւորք:

## Գլուխ Առաջին:

Աշակերտն:

Որովհետև լսեմ. թե իցէ հար
կաւոր գիտելն զքրիստոնէական


վար

վարդապետութիւն առ՚ի կեցութ.
ըղձամ, զի բացայայտիցես ինձ
թէ զինչ իցէ այս վարդապետութի ։

Վարդապետն ։

Քրիստոնէական վարդապետու
թիւն է կարճառօտ իմն համառօտու
թի. կամ բովանդակութի բնաւից
այնոցիկ իրաց, զորս Տէրն մեր Յս
Քս ուսոյց մեզ առ՚ի ցուցանել
մեզ զճանապարհն կեցութե ։

՚ա Որքանք են մասունք գլխաւ
որք. և հարկաւորագոյնք այսորիկ
վարդապետութե ։

վ, Են չորս, այսինքն. Հաւատամք,
Հայր մերն, Տասն պատուիրանքն,
և Եօթն սրբազնութիւքն ։

ա, Ընդէր են չորս, և ոչ աւելի
կամ պակաս ։

վ, Վասնզի երեք են զօրութիւնք
գլխաւորք, այսինքն, Հաւատն,
Յոյսն, և Սէրն,
Հաւատամքն, է հարկաւոր վասն
հաւ

հաւատոյ ։ քանզի ուսուցանէ մեզ զայն . զոր պարտիմք հաւատալ ։ Հայր մերն, է հարկաւոր վ̃ն յուսոյ ։ քանզի ուսուցանէ մեզ զայն, յոր պարտիմք յուսալ ։

Տասն պատուիրանքն, են հարկաւորք վ̃ն սիրոյ . քանզի ուսուցանեն մեզ զայն, զոր պարտիմք առնել սակս հաճոյանալոյ Ա̃յ ։

Սրբազնութիւնքն են հարկաւորք ։ քանզի են գործիք, որովք ընկալեալք լինին և պահպանին զօրութիւնք . զորս ասացաք գոլ հարկաւորս առ կեցութի̃ն ։

Ցանկամ, զի տայցես ինձ զօրի ա,
նակ ինչ . առ՚ի լաւագունապէս՝ իմանալ զհարկաւորութի̃ այսոցիկ չորից մասանց քրիստոնէականի վր դապետութեան ։

Սուրբն օգոստինոս տայ մեզ զօ բ.
րինակ իմն տան ։ Քանզի որպէս առ՚ի շինել զտուն ինչ, է հարկա-

որ դնելն նախ զհիմն. և յետոյ կանդնել զորմունս. և ՚ի վախճանի ծածկել զնա ցուով: և առ՚ի առնել զայսոսիկ, ախտոյանան մեզ գործիք ոմանք: Այսպէս՝ առ՚ի անել՚ի հոգւոյ զշինուած կեցուէ. ախտոյանայ մեզ հիմն հաւատոյ, որ մուտք Յուսոյ, ցու Սիրոյ: և գործիք. ոմանք, որք են սրբազան գունեղք սրբազնութիք:

# ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## Նշանի Խաչին:

### Գլուխ Երկրորդ:

ա, Յառաջ քան զգալն ՚ի նախկին մասն վարդապետութեան. ըղձամ, զի տայցես ինձ զառհաւատչեայ ինչ իրացն. յորս պարտիմք հաւատալ. բացայայտելով ինձ թեթևապէս, և համառօտապէս՝ զխորհուրդս հարկաւորագոյնս. որք

պա

պարունակին 'ի համատամին ։

Բարձրք ասես, և ես այդպէս՝ Պ.
կամիմ առնել ։ Արդ՝ պարտիս գի-
տել, զի երկու են խորհուրդք
գլխաւորք հաւատոյն մերոյ, և եր-
կաքանչիւրն պարունակի 'ի նշանի
այնմիկ, որ կոչի նշան սրբոյ խաչին ։
Առաջին խորհուրդն է միութին
և երրորդութին այ ։ Երկրորդն է
ներմարմնութն և կրելութն կեցուց-
չին մերոյ ։

Զինչ նշանակէ միութիւն և Հ.
երրորդութին այ ։

Այսոքիկ են երք բարձրագու- Պ.
նեղք, որք սակաւ առ սակաւ հե-
տևապէս՝ դորդաբանեցին ներ յա-
ռաջման վարդապետութե ։
Բայց յաղագս այժմոյս բաւակա-
նասցի ուսանիլ զանուանս . և իմա-
նալ զսակաւս զայս ըստ կարի ։
Միութին Ա՛յ նշանակէ, թէ 'ի վեր

քան զընաւէս իւրս ստեղծականս իցէ
մի ինչ, որ ոչ ունի զսկիզբն։
Այլ միշտ էր, և միշտ է, և եղիցի.
որև արար զայլս իւրս ընաւէս, և
պահպանէ զնոյնս և կառավարէ.
և է հանրից բարձրագունեղ, պա
տուէականագունեղ, գեղեցկագու
նեղ. և հզօրագունեղ. այլև Տ͞ր
ընդ արձակագէս՝ ամենից իրաց
և այս է, որ կոչի Ա͞Ծ. որ և է միակ
և միայնակ, քանզի 'ի նմայ ոչ կարէ
գոլ. եթէ ոչ մի ա͞ծուե͞ն, այս ինքն,
մի միայն բնութե͞ն, և էութե͞ն. ան փո
խանապէս՝ հզօր, ան հունապէս՝
իմաստուն. և գերազանցապէս՝ բա
րի, և այլն։
Բայց՝ սակայն այս ա͞ծութիւն գը
տանի յերիս անձինս։ որք կոչին
Հայր՝ Որդի՝ և Հոգի ս͞բ. այսո
քիկ երեք անձինք են մի միայն Ա͞Ծ
վ͞ս զի ունին զմի և զնոյն ա͞ծուե͞ն,
և զէութե͞ն։ զոր օրինակ, եթէ
երեք

երեք անձինք յերկրի աստ. կոչե
ցեալք Պետրոս Պօղոս և Յոհան
նէս. ունելին զմի և զնոյն հոգի, և
զմի և զնոյն մարմին. ասացեալք լի
նելին երեք անձինք: քանզի միննն
լինէր Պետրոսի, միւսն Պօղոսի,
և միւս Յոհաննու, և սակայն լինե
լին մի մարդ միայն. և ոչ երեք: ոչ ու
նելով զերկս մարմինս, և ոչ զերկս
հոգիս, այլ զմի մարմին, և զմի հո
գի: Այս ոչ է կարելի 'ի մէջ մարդ
կան. քանզի՝ գոյն մարդոյ է փոքր,
և վախճանաւոր. վա այնորիկ ոչ կա
րէ գոլ 'ի յոքունս անձինս. բայց
գոյն Այ, և Ածութիւնն իւր
է անեզր: սակս այսորիկ կարէ գը
տանիլ. և գտանի նոյն գոյն, և
նոյն Ածութիւնն Հօր յՈրդւոյ,
և ըն Հոգւոյ սրբում. են ուրեմն
երեք անձինք, զի միննն է Հայր,
միւսն է Որդի, և երրորդն է Հո
գին սբ. և սակայն են մի Ած միայն

 քան

քանզի ունին զնոյն ա՛ծութիւն, զնոյն գոյ, զնոյն կարողութիւն, զիմաստութիւն, զբարութիւն, և այլն:

ա, Ասա ինձ այժմ, զինչ իցէ ներ մարմնութն և զինչ կրելութն կեցուցչին մերոյ:

վ, Պարտիս գիտել, թէ երկրորդ անձն ա՛ծային, զոր ասացաք կոչիլ Որդի. բաց ՚ի գոլոյն իւրմէ ա՛ծայնոյ, զոր ունէր յառաջ քան թէ աշխարհ ստեղծեցեալ էր, և մանաւանդ յաւիտենից. էառ զմարդկային մարմին, և զմարդկային հոգի ներ արգանդի ուրումն մաքրագունեղի կուսի, և այսպէս՝ այն՝ որ յառաջ էր ա՛ծ միայն. սկսաւ լինիլ ա՛ծ և մարդ: և զկնի կենցաղավարելոյն իւրոյ ընդ մարդկան զամս երեսուն և երիս. ուսուցանելով զճանապարհն կեցութե, և առնելով զբազում սքանչելիս.

ի վախ

'ի փախճանի թոյլ եւս ինքեան բե
եռնլ 'ի խաչին, և 'ի նմին մեռանել·
առ 'ի վճարել Ադամայ մեղաց ամե
աշխարհի, և յետ երից աւուրցյա
րեաւ 'ի մահուանէ 'ի կեանս, և
զինի քառասուն աւուրց համբար
ձաւ 'ի յերկինս, ո͞ր ուսելոցք եմք
'ի պարզաբանութե Հաւատամին:
Ահա այս է ներմարմնութի և կրե
լութի կեցուցչին մերոյ:

Ընդէր լցեն գլխաւորք. այսո ,ա
քիկ խորհուրդք հաւատոյն մերոյ:
Վ͞զի նառաջնութն պարունակի Վ.
նախկին սկիզբն, և վերջին վախ
ճանն մարդոյն: Եւ ներկրորդութն
պարունակի միայնակին այն և գործ
նագունեղ միջնորդն, որով ճանա
չեցեալ լինի այն առաջին սկիզբն:
և ժամանեմք 'ի վերջին վախճանն
այն: Եւ քանզի հաւատովք, և դաւ
անե

անելով զայսոսիկ երկոքեանս խոր
հուրդս. ցուցանեմք զմեզ գոլ զա
տեցեալս 'ի բնաւից ամից աղանդոց
հեթանոսաց, թուրքաց, յուդայ
եանց, և հերետիկոսաց: Եւ առաւ
ել, որ՝ առանց հաւատալոյ և դաւ
անելոյ զայսոսիկ երկոքեանս խոր
հուրդս. ոչոք կարէ կեցուցանիլ:

Հ, Զիարդ՝ արդեօք պարունակե
ցին խորհուրդքս այսոքիկ ներ
նշանի սրբոյ խաչին:

Պ, Զնշան սրբոյ խաչին առնեմք
ասելով: Յանուն ✠ Հօր, և Որ
դւոյ, և Հոգւոյն սրբոյ: և հաւանեն
զամենայն՝ խաչակնքելով զմեզ:
Զի մինչ ասեմք Յանուն Հօր,
դնեմք զաջ ձեռն մեր 'ի ճակատն
մեր: Եւ մինչ ասեմք, և Որդւոյ,
բերեմք զնոյնն 'ի ներքոյ կրծին մե
րոյ. և յետ որոյ մինչ ասեմք: և Հո
գւոյն սրբոյ. անդրբերեմք զնոյն
ձեռն մեր 'ի ձախոյ ուսոյն մերմէ

ասեմ.

առ աջն։ Արդ՝ բառքս այսոքիկ․
Յանուն, մեզ ծանուցանեն զմի
ութիւն ա̃յ․ զի Յանուն՝ ասէ, և ոչ յա
նուանս։ և զի այսու անուամբ, խնա
նի իշխանութ̃ի և հեղինակութ̃ին ա̃ծ
ային, որ է միակ և միայնակ ՚ներքս
անձինս բոլորս։ Իսկ բառքն այնո
քիկ, Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն
սրբոյ, ծանուցանեն մեզ զերրոր
դութիւն անձանցն։ Եւ խաչակնե
քելն զմեզ, յարաբերէ մեզ զանձն
Որդւոյն ա̃յ․ և հետևապէս՝ զնե
րմարմնութ̃ի նորին։ Այլև անդրան
ցանելն ՚ի ձախոյ ուսոյն մերմէ
առ աջն․ և ոչ յաջոյն ուձախն, նշա
նակէ․ թէ կրելովք Տ̃ն մերոյ Յ̃ի
Ք̃ի անդրաբերեցեալք եղաք յի
քուց անցաւորաց առ յաւիտենա
կանս, ՚ի մեղաց առ շնորհս, և ՚ի
մահուանէ առ կեանս։

ա․ Վասն էր առնեմք զնշան սրբոյ
խաչին։

Առ

Վ. Առնեմք զնշան խաչին, զինո
րաւ ցուցանիցեմք զմեզ գոլ քրիս
տոնեայս, այսինքն, զինուորս գերազան
ցի կայսերն մերոյ Քրի. քանզի նշանս
այս, է իբրեւ զդրօշակ, կամ իբրեւ
զհանդերձ զինուորական. որ զանա
զանէ զզինուորս Քրի, 'ի բնաւից
թշնամեաց սրբոյ եկեղեցւոյն. այսինքն,
'ի հեթանոսաց, 'ի յուդայեանց, 'ի
թուրքաց, և 'ի հերետիկոսաց:
Այլև առնեմք զնշան խաչին. առ
'ի կոչել զօգնութիւն աստուածային 'ի հա
մայնս գործս մեր. քանզի, ընդ այ
սու նշանի ներկոչի 'ի յօգնութիւն ա
մենասուրբ երրորդութիւն, միջնոր
դութբ կրելութեան մերոյ կեցուցչին:
Ուստի՝ սովոր են, քրիստոնեայք
բարիք առնել զնշանս զայս, յոր
ժամ յառնեն 'ի յանկողնոյ. յոր
ժամ 'ի տանէ արտելանեն, յորժամ
'ի սեղանի բազմին, և յորժամ գնան
'ի ննջել. այլև 'ներ սկզբան այլոց

երաց ամենից, զորս առնել ախոյն :
Նաեւս առնեմք զնշանս զայս, առ 'ի զինաւորել զմեզ ընդդէմ ամենից փորձութեանց դիւին. վասն զի 'ի նշանէ յայսմանէ յոյժ սատանին դեւքն. և փախչին 'ի սմանէ. ըստ որում առնեն չարագործքն, մինչ տեսանեն զնշանն արքունի:
Եւ բազմիցս` միջնորդուբ այսորիկ նշանի ✠ սրբոյ խաչին զերծի մրդն 'ի բազմաց վտանգից, այնքան` 'ի հոգևորաց, որքան` 'ի մարմնաւորաց յորժամ առնեմք զնոյնն, հաւատով և համարձակուբ ողորմութեն ածայնոյ, և արդեանցն Քի մերոյ Տեառն:

## ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹԻՒՆ
### Հաւատամին :

### Գլուխ Երրորդ :
Աշակերտն :

Գալով այժմ առ նախկին մասն այ

սորին վարդապետութեան, ցան-
կամ ուսանիլ զՀաւատամսն :

Վարդապետն :

Հաւատամսն պարունակէ ՚ի ինքեան
զերկոտասան մասունս. որք յօդու-
ածք ասասին : Եւ են երկոտասան
ըստ թուոյ երկոտասան Առաքելոց :
որք շարադրեցին զնա և են այսոքիկ:

1 Առաջինն է: Հաւատամ ՚ի յԱստուած
Հայրն ամենակալ, Ստեղծողն
երկնի և երկրի:

2 Երկրորդն է: Եւ ՚ի Յիսուս Քրիստոս Նո-
րին Որդին միակի, Տէրն մեր:

3 Երրորդն է: Որ եղև յղացեալ
՚ի Հոգւոյն սրբոյ, ծնաւ ՚ի Մա-
րիամայ կուսէն:

4 Չորրորդն է: Կրեաց ընդ փոն-
ցիոսիւ փիլաթոսիւ, եղև խաչե-
ցեալ, մեռեալ, և թաղեցեալ:

5 Հինգերորդն է: Էջ ՚ի դժոխսն,
՚ի Երրորդում աւուր վերյարեաւ
՚ի մահուանէ :

Վեց

Վեցերորդն է ։ Համբարձաւ զ
՚ի յերկինս, Նստի ընդ աջմէ Ած
Հօր ամենակարողի ։

Եօթներորդն է ։ Ուստի գա է
լոց է ՚ի դատել զկենդանիս և զմե
ռեալս ։

Ութերորդն է ։ Հաւատամ ՚ի ը
Հոգին սուրբ ։

Իններորդն է ։ ՚Ի սբ կաթողի թ
կէ եկեղեցին, ՚ի հաղորդութիւն
սրբոց ։

Տասներորդն է ։ ՚Ի թողու 10
թիւն մեղաց ։

Մետասաներորդն է ։ ՚Ի յա 11
րութին մարմնոց ։

Երկոտասաներորդն է ։ ՚Ի կեանն 12
յաւիտենական. Ամէն ։

Մեկնեա ինձ զառաջին յօդու ա-
ածն բառ առ բառ ։ Եւ թէ զինչ
իցէ ասելն Հաւատամ ։

Հաւատամ ասելն, է ասել թէ ես Պ.
ընդունիմ զքո հաւատոյ. և զօր

ճըշ

Աշխարհագրութեան զմմ ինչ, որ՚ն այ
սոսէն երկրպագութեան օգուճածս հաճ
ատոյ պարունակի: Եւ զայս այս
պէս՝ վասն այնորիկ ընդունիմ, զի
նոյնինքն Ած զայսոսիկ դատողու
թիս ուսոյց սրբոց Առաքելոց. զորս
և Առաքեալքն սրբ եկեղեցւոյ ու
սուցին, իսկ եկեղեցին մեզ զնոյնս
միշտ ուսուցանէ: Եւ քանզի ան
կարելի է, թէ Ած զսուտ ինչ ասի
ցէ, վասն որոյ՝ հաւատամ առաւել
հաստատագոյնս գոլ զիրս զայսոսիկ
հաւատոյ, քան զայնոսիկ՝ զորս ա
չօք տեսանեմ, և ձեռօք շօշափեմ:
ա, Զինչ իցէ ասելն: ՚ի Յած:
Պ. Ասել է, թէ մեք պարտիմք հաճա
տալ հաստատապէս՝ զած գոլ յամ
ուրեք՝ և աստ ևս ներկայ և պատ
րաստ: Թէև աչօք մերովք մարմնաւ
որօք ոչ տեսանիցեմք զնա. և զի մի
միայն գոյ Ած, վասնորոյ՝ ասի ՚ի
Յած, և ոչ ՚ի Յածս: Արդ՝ ոչ պար
տիս

տես երեւակայացուցանել քեզ, թէ ԱԾ, իցէ նման մարմնականի ուրեք իրի, թէեւ իցէ յոյժ մեծ, եւ յոյժ գեղեցիկ իրն այն. այլ պարտես խորհիլ, թէ ած իցէ իր իմն հոգեկան, որ միշտ գոյր, եւ միշտ եղոց է, որ արարեալ է զընաճս, որ ինքեամբ լցուցանէ զհամայնս եւ կառավարէ զամենայնս, որ եւ գիտէ, եւ տեսանէ զամ ինչ. աստուստ զինչեւիցէ, որ յարաբերիցի աչաց քոց, եւ երեւակայութե: այլ տես ասել այս՝ որ այժմ ինձ յարաբերի կամ երեւի, ոչ է ԱԾ. քանզի ԱԾ է իմն ինչ անհունապէս՝ լաւագոյն:

Ընդէր ասի թէ ԱԾ է Հայր:

Վնզի, է ճշմարտապէս՝ Հայր ա
Որդւոյ իւրոյ միածնի. զորմէ խօ Վ.
սեցուք, ՚ներկրորդում յօդուածոյն հաւատոյ. Դարձեալ Հայր ասի, զի է Հայր ամենեցուն արարածոց, սակայն ոչ բնութե, այլ որդեգրութե:

ԱԼ

6
8236-57
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ—Арм. ССР.

Այլև, զի է Հայր բոլորից ստեղ
ծուածոց. սակայն՝ ոչ բնութ՟բ, և
ոչ որդեգրութ՟բ, այլ ստեղծելութ՟բ:
ըստ որում՝ ասասցուք վաղվաղա
կի 'ներ յօդուածոյս այսմիկ:

Ա, Ընդէ՞ր տաս ամենակարող:

Վ, Վ՟զի, անունս այս՝ է յատուկ
մակադիր Այ. և թէպէտ՝ Ած ու
նի զբազումս մակադիրս ինքեան յա
տուկս, որպիսիք են, յաւիտենա
կան, անհուն, անչափ, և այլն. սա
կայն՝ 'ըն տեղւոյս այսմիկ, յաւէտ
պատշաճաւոր է, զի ամենակարո
ղութ՟ն նորին յիշեսցի, ո՟զի մի դժուա
արին ինչ մեզ թուեսցի հաւատալն,
թէ նա իցէ արարեալ զերկին և զեր
կիր յոչ ընչէ, ըստ որում՝ սուա
դրին բառքն հետևեցեալք. վ՟զի
նմա, որ կարէ առնել զա՟մ ինչ, զոր
կամիցի առնել. և այնր աղագաւ ա
մենակարող է՛, ոչինչ կարէ գոլ դժուա
րին: և թերևս դու ինձ ասիցես.

Աձ

Ա͞ծ ո՛չ կարէ մեռանիլ, և ոչ մեղանչել. ուստի՝ ոչ երբէք, թէ կարիցէ առնել զա͞մ ինչ: Աւոր, ես քեզ պատասխանեմ, թէ կարելն մեռանիլ, և կարելն մեղանչել, ոչ է կարողութի, այլ է անկարողութի. ո͞պ մինչ ասի զումեմնէ քաջագունեղէ զինւորէ թէ կարէ յաղթել զա͞մս. և ոչ կարէ գոլ յաղթեցեալ յումեքէ: Արդ՝ ոչ բացասի քաջութի նր͞, վ͞ս ասելոյն, թէ նա ոչ կարէ գոլ յաղթեցեալ. զի կարելն գոլ յաղթեցեալ, ոչ է քաջութի. այլ տկարութիւն:

Զի՞նչ էյէ ասելն, Ստեղծօղն: ա,

Ասել է թէ Ա͞ծ արարեալ է զա͞մ ի͞ն ինչ յոչընչէ. և նոյն ինքն միայն կարէ զն͞ս 'ի յոչինչ վերլուծանել. թէպէտ՝ կարեն հրեշտակք և մարդիկք այլև դևք ևս առնել, և քակել, զեր ինչ. բայց՝ ոչ կարեն առնել, եթէ ոչ 'ի նիւթոյ յումեքէ,

որ նախ ունէր զիւրն գոլ և էութիւն։
և ոչ կարեն քակել. եթէ ոչ առ այլ
ինչ զնա վերլուծիցեն։ ապա որմնա
դիր ոք, ոչ կարէ շինել զտուն իմն
յոչ ընչէ, այլ 'ի քարանց, 'ի կրէ, և
'ի փայտից։ զոր և ոչ կարէ քակել,
վերլուծելով 'ի յոչինչ, այլ անդրա
ծելով զնա, 'ի քարինս, 'ի փոշի, 'ի
փայտս, և 'ի նմանս սոցին։
Վ̃ որոյ Ա̃ծ միայն ասի ստեղծող,
և է իսկ, զի նա միայն է, որ ոչ կարօ
տի նիւթոյ ումեք, առ 'ի առնել
զէակս։

ա, Վ̃էր ասի ստեղծօղ երկնի և
երկրի։ մի թէ ա̃ծ ոչ լիցէ արարեալ
ևս զօդ, զջուր, ըզ քարինս, ըզ
ծառս, զմարդիկ, և զայլս իրս ա
մենայնս։

բ, Ընդ երկնի և երկրի իմանին
ևս այնոքիկ համայնք, որք գոն պա
րունակեցեալք 'ի մէջ երկնի և
երկրի։ որպէս եթէ ոք ասիցէ թէ
մարդն

մարդն ունի մարմին և հոգի. իմա
նալես, թէ մարդն ունի զայլս երա
ամենայնս, որք 'ըն մարմնում գտա
նին. որպիսիք են երակք, արիւն,
ոսկերք, ջիլք և այլն: այլև զայնս
իսկ բնածս, որք ներ հոգւոջ գտա
նին. որպիսիք են, միտն, կամն, յի
շատակն, զգայութիւքն ներքինք,
և արտաքինք, և այլն: Ա՟որոյ՝ է
երկնի իմանալին ևս հրեշտակքն,
այլև օդն, և որք 'ի նմա են, որպի
սիք են թռչունք, և ամպք, և աս
տեղք, և այլք այսպիսիք բարձրա
գոյնք. ուստի՝ ասի, թռչունք,
ամպք, և աստեղք երկնից:
Իսկ ընդ երկնի իմանալի այն՝ ա՟մ, որ
պարունակեցեալ է 'ի յօդոյն: որ
պիսիք են ջուրքն ծովու, և գե
տոց, որք զետեղին 'ըն մասունս
ստորագոյնս երկրի: այսպիսիք են
ևս կենդանիք, տունկք, քարինք,
և մետաղք, և այլք բնածք այսպի
սիք

ռեք. որք գտանին ՚ի մէջ երկրի, կամ ծովու: Ասի ուրեմն ած՟ ստեղծօղ երկնի և երկրի: զի սորա երկոքեանս են մասունք սկզբնաւորք աշխարհի: մինն վերագոյն ՚ն որում բնակին հրեշտակք: և միւսն ստորագոյն, ՚ն որում բնակին մարդիկ: Եւ զի այսոքիկ երկոքեանս են ստեղծուածք պատուականագոյնք քան զայլս համայնս: որոց այլք ամենայնք ծառայեն, ըստ որում և ինքեանք պարաւոն դեցեալք են ՚ի ծառայել Այ՟. որ յոչ ընչէ է արարեալ զն՟ա, և յարադրեալ ներ այսպիսում բարձրագունոյ կացութեան:

## ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹԻւն
### Երկրորդի յօդուածոյն:

ա՛ Մեկնեա ինձ զերկրորդ յօդուածն հաւատոյ, թէ զինչ իցէ ասելն

ասելն: Եւ 'ի Յս՟ Քս՟ նորին Որ
դին միակի, Տ՟րն մեր:
Այն՝ ամենակարողն Ած, զոր վ,
մեք վերպեցաք 'ն առաջնում յօդուա
ծոյ. ունի զմի Որդի Ճշմարիտ,
և բնական որ կոչի Յս՟ Քս՟: Նւզի
կերպիւ իւիք իմանայցես թէ զի
արդ՝ Ած ծնեալ իցէ զիւր Որդին:
կալ քեզ զօրինակ 'ի հայելւոյն:
Յորժամ նայի ոք 'ի հայելին, իս
կոյն՝ յառաջածէ զպատկերն իւր
'ի նմա, այնքան նման իւրեան ին
քեան մինչզի 'ի մէջ իւրն և պատ
կերին ոչ իմն տարբերութի՟ կարէ
գտանել. որով հետև ոչ միայն՝ կազ
մուածով, այլև շարժմամբ իրե
րաց յարանմանեն. զի 'ի շարժելն
մերդոյն շարժի նմանապէս՝ և պատ
կերն նորին: Բայց 'ի միտ ած թէ
պատկերն՝ այնքան նման իւրում
նախատիպին, զիարդ՝ եղանի :
ոչ աշխատութ՟, ոչ ժամանակաւ,
և ոչ

և ոչ գործեաւ, այլ 'ըն միում վայրկենի, միով և միայնով նկատմամբ: Արդ՝ ը՟ այսմ՝ խորհեաց, թէ Ա՟ծ նկատելով զինքն իւր, աչօք իմացման, 'ըն հայելւոյ ա՟ծութե՟ իւրոյ, յառաջէած զպատկեր իւր, իւր եան ինքեան նմանագունեղ. և վ՟զի այսմիկ պատկերի առեալ է ա՟ծ զբոլոր գոյացութի՟ն իւր, և զբոլոր գոյն իւր. զոր մեք ոչ կարեմք առնել, մինչ նկատեմք զմեզ 'ըն հայելւոյ. վ՟որոյ պատկերն այն ա՟յ, է Ճշմարիտ որդի ա՟յ. իսկ մերքն պատկերք, զորս 'ըն հայելւոյ տեսանեմք, ոչ են որդիք մերք:

Աստուստ՝ հաւաքել պարտիս, թէ ա՟պ որդին ա՟յ է Ա՟ծ իբրև զհայր և մի և նոյն ա՟ծ ը՟ Հօր. վ՟զի զմի և զնոյն գոյացութի՟ Հօր ունի:

Եւ մանաւանդ հաւաքել պարտիս, զորդին ա՟յ ոչ գոլ մանկագոյն քան զհայր: այլ է, և գոյր միշտ իբրև

զհայր

զՀայր, զի է՛ ծնեցեալ լոկն միայ նովնկատարմամբն ա̃յ յինքն իւր. նաև Ած միշտ նկատէ զինքն իւր:

Եւ զկնի հաճաքել պարտիս, թէ Որդին ա̃յ ոչ լիցէ ծնեցեալ օգնութե̃ կնոջ ուրուք, ոչ երկարութե̃ ժամանակի, ոչ զաղրութե̃ ցանկութե, և ոչ այլովք անձկարութե̃ք. քանզի ո̃պ ասացաք; է՛ ծնեցեալ ՚ի Հօրէ միայնոյ. միով պարզիւ նըկատարմամբ իւրեան ինքեան, աչով միաքրագունեղիւ իմացմանն Ած այնոյ:

Ընդէր այն՝ որդին Ա̃ծ կոչի ա, Յս̃ Քս̃:

Յս̃ ասելն նշանակէ զկեցուցիչ: վ, և Քս̃, որ է օծեցեալ. նշանակէ, զքահանայապետ, և զթգ̃ւր ամենեց թգ̃ւրց. Արդ՝ ո̃պ ասացի ՚ըն պարզաբանութե նշանի սրբոյ խաչին. Որդին ա̃յ առ՚ի գալ ՚ի փրկել զմեզ արեամբ իւրով, և ՚ի վերա

ծել

ծել զմեզ առ կեցութիւն յաւիտե
նական. եղև մարդ, և ընկալաւ զա
նուն կեցուցչի. վս͡ ցուցանելոյ
աշխարհի, թէ ինքն իցէ եկեալ 'ի
կեցուցանել զմեզ: Որ և վերապա
տուեցաւ 'ի Հօրէ մակագրիւ գե
րազանցի քահանայի. և գերագու
նի արքայի, որք ամենայնք նշանա
կին այսու անուամբս, Քս͡: յորմէ
և մեք առ կոչեցաք քրիստոնեայք:
Զի որպ͡ մարդկային բնութն͡ քն͡,
ա͡ծութբն է օծեցեալ. այսպէս՝ մեք
շնորհօքն Քի͡, եմք օծեցեալք 'ի
ձեռն եկեղեցւոյ սրբազնութեց:

ա, Ա͡ էր յորժամ ասեմք, Յս͡.
բանամբ զգլուխս մեր, զորս և խո
նարհեցուցանեմք: Իսկ մինչ ա
սեմք զայլս անուանս Այ͡. ոչ այս
պէս առնեմք:

բ, Ա͡զի անունս այս, Յս͡, է յա
տուկ անուն Որդւոյն Այ͡. իսկ
այլքն ամենայնք են անուանք հա

սա

սարանկք. Այլ և անուանս այս՝ յա
րաբերէ մեզ. Թէ որպ ա՟ծ զինքն խո
նարհեցոյց, լինելով մարդ վ՟ն մեր:
Յաղագորոյ, մեք վ՟ն շնորհակա
լութե. խոնարհեցուցանեմք նմա
զգլուխս մեր, և ոչ միայն մեք մար
դիկս, այլ և հրեշտակք երկնից, և
դևք դժոխոց. զինքեանս այսմիկ
անուան խոնարհեցուցանեն. Թէ
պէտ ն՟ք սիրով, իսկ ս՟ք ուժով:
Վ՟զի ա՟ծ այսպէս՝ կամեցաւ, Թէ
համայնք ստեղծուածք բանականք
զինքեանս առաջի որդւոյ իւրոյ
խոնարհեցուցանիցեն. զի նա զինքն
խոնարհեցոյց վ՟ն սիրոյ մերոյ մին
չև 'ի մահ խաչին:

Վասնէր ասի, Թէ Յ՟ս Ք՟ս, է տ՟,
Տ՟ն մեր:

Վ՟զի ընդ հօր իմաստին ստեղ֊
ծեալ է զմեզ յոչ ընչէ: ուստի՝ է իշ
խող և Տ՟ր մեր. հաւասար Հօր:
Եւ սատուածել, զի իւրովք աշխա

րհս

տանօք և կրելութե՟ք զմեզ փըր
կեաց 'ի բանտարգելութենէ դիւ
աց: զորմէ ասելոց.ք եմք առօրեւ:

## ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹԻՒՆ
### Երրորդի յօդուածոյն
### Հաւատոյ:

ա, Հետեւի, զի այժմ պարզաբա
նիցես ինձ. զերրորդ յօդուածն,
թէ զինչ իցէ ասելն. Որ յղացեալ
եղև Հոգւով սրբով. Եւ ծնաւ 'ի
Մարիամայ կուսէն:

բ, Այսմիկ յօդուածոյս բացայայ
տի մեզ նո՛ր և սքանչելի եղանակ
ներմարմնութե՟ն որդւոյն Ա՟յ
Վ՟զի ո՟չ յայտ է ամենեցունց. ո՛ր
այլք ա՟մք մարդիկ ծնանին 'ի հօրէ
և 'ի մօրէ: և թէ մայրն ո՛չ մնայ կոյս
զկնի յղանալոյն և ծնանելոյն զոր
դին իւր: Իսկ Որդին Ա՟յ, կամե
լով մարդ եղանիլ. ո՛չ կամեցաւ

ունել զհայր 'ի յերկրի, այլ միայն
զմայր, որոյ անուն է Մարիամ. որ
եղև միշտ կոյս մաքրութեանց. քն
զի Հոգւոյն Սբ, որ է երրորդ անձն
Ածային. և է մի Ած նոյն ընդ Հօր
և ընդ Որդւոյ, իւրով անհրնելի կա
րողութբ կերպաւորեաց յարենէ մաք
րութեանցն ասացելոյ կուսին. ներ
յարգանդի նորին զմարմին իմն երե
խայի կատարելագունեղ. և 'ի նոյ
նում ժամանակի ստեղծեաց յոչ
ընչէ զհոգի ոմն պատուականագու
նեղ. զորև շաղկապեաց ընդ մարմ
նոյ այնորիկ երախայի. իսկ զբաղա
դրեցեալ բոլորն զայն, միաւորեաց
որդւոյն Այ ընդ. անձին իւրում:
և այսպէս Որդին Այ, որ յառաջ
էր միայն լոկ Ած, սկսաւ լինել
մարդ. վն որոյ ասի Ած և մարդ է
Յս Քս. որև ոպ ըստորում Ած ու
նէր զհայր առանց մօր: այսպէս ըստո
րում մարդ ունի զմայր առանց Հօր:

 կա

ա, Կամիմ, զի տայցես ինձ զօրէնսն իմն, կամ զյարացոյց. առ՚ի իմանալ նուխա թէ ո՞րպ կարիցէ կոյսն յղանալ:

վ, Զխորհուրդս Ած պարտիմք հաւատալ թէ և ո՛չ իմանայցեմք զնոսա. զի որքան մեք կարծեմք խորհիլ. Ած քան զնոյնս բազմագոյնս կարէ առնել: Վն որոյ ասի ՚ի սկզբան հաւատամքն. թէ Ած է ամենակարող: Այլ սակայն դըմի գեղեցիկ օրինակ ներ ստեղծելուն աշխարհի: Ո՛չ ապաքէն երկիր ըստ կարգի ոչ յառաջածէ և բուսուցանէ զցորեան. եթէ նախ ո՛չ իցէ վարեցեալ. և սերմանեցեալ և ոչ իցէ ոռոգեցեալ յանձրևաց և ջերմացեալ յարեգականէ:

Սակայն ՚նախկզբանն, մինչ յառաջածեցեալ եղև ցորեանն յերկրէ ոչ վարեցելոյ. յոչ սերմանեցելոյ, յո՛չ յոռոգեցելոյ, և յոչ ջերմացե

լոյ

լոյ։ այլ ըստ խուրում եղանակի, եր-
րեւ բոլորովին 'ի կուսէ. զի լոկ և
միայնով հրամանաւ ամենակարո-
ղին Ա՟յ, և զօրութ՟ նորին հզօրե-
երկիրն կոյս. առժամայն յառաջ-
եած զցորեանն։ Այսպէս ու-
րեմն, Կուսական յարգանդն Մա-
րիամու Թորց ուրուք գործակցու-
թե՟ մարդկայնոյ. լոկ և միայնով
հրամանաւն ա՟յ, և ներգործութ՟
Հոգւոյն սրբոյ յառաջեած զցո-
րեանն զայն մեծագին մարմնոյն
հոգևորեցելոյ, Որդւոյն Ա՟յ։

Եթէ Յս՟ Քս՟ եղև յղացեալ, ա՟
ներգործութ՟ Հոգւոյն սրբոյ։
Թուէի ուրեմն, թէ կարիցէ ասել
Հոգին ս՟բ հայր նորին, ըստ որում
է մարդ Յս՟։

Ոչ այսպէս, քանզի առ՚ի գոլ ո՟
Հայր ոչ է բաւական զի առնիցէ
ոք զեր ինչ. այլ պարտ է, զի առնի-
ցէ զնոյնն. 'ի յատկէ յիւրմէ գոյա-

ցու-

ցութենէ. ուստի ասեմք զորմնա
դիրն ոչ գոլ հայր տանն 'ի նմանէ
կերտեցելոյ. զի կերտէ զնոյնն ոչ
'ի յատկէ իւրմէ մսէ, այլ 'ի քղմիդ
րաց. և յայլոց իրաց:
Արդ՝ Հոգին սբ՟ տրար զմարմին
որդւոյն Ած՟. ոչ 'ի յատկէ յիւրմէ
գոյացութէ, այլ 'ի մնէ և յարե
նէ կուսին. վն՟ որոյ Որդին մր՟ Յս՟
Քս՟. ոչ է Որդի Հոգւոյն սրբոյ:
բայց ըստ որում է ած՟, է Որդի
Ած՟ Հօր. զի 'ի նմանէ ունի զած՟
ութիւն: Իսկ ըստ որում՝ է մարդ.
է Որդի կուսին, քանզի 'ի նմանէ
ունի զմարդութիւն:

ա, Ընդէր ասի, թէ Հոգին սբ՟ ա
րար զներգործութիւն զայս ներ
մարմնութեան: մի թէ Հայրն ևս և
Որդին ոչ էցեն համընթացեալք
'ի նոյնն:

բ, Զոր ինչ առնէ մի անձն ած՟այ
ին, համառնեն զնոյնն. այլք երկո

քեան

քեան անձինքն ի միասին. վասն զի ու-
նին զմի և զնոյն կարողութիւն. զմի
և զնոյն իմաստութիւն. և զմի և զնոյն
բարութիւն: Բայց՝ սակայն՝ գործք
կարողութեան առընծային Հօր: և
գործք իմաստութեան Որդւոյ, իսկ
գործք սիրոյ Հոգւոյն սրբոյ:
Եւ քանզի այս՝ ներգործութիւն
ներմարմնութեան եղև գործ գերա-
գունեղի սիրոյն. հանդէպ՝ ազ-
գի մարդկայնոյ: վասնորոյ առըն-
ծայի Հոգւոյն սրբոյ յատկա-
պէս:

Կամիմ, զի տայցես ինձ զօրինակ ա-
ինչ. որով կարիցեմ իմանալ. թէ զի-
արդ՝ հոմայնք երեքեան անձինքն
աստուածայինք լիցեն համարնթացեալք
՚ի ներմարմնութիւն, բայց սակայն՝
միայն Որդին է ներմարմնացեալ:

Յորժամ մարդ ոք զգենու զըզ-
գեստ իմն. և այլք երկու արք օգ-
նեն նմա առ՚ի զգեցուցանել զնա:

Յայն

Յայնժամ երեքեանն իմիասին համարնթանան առ մի և նոյն ըզ գենուլն. սակայն մինն միայն 'ի նոցունց լինի զգեստաւորեցեալ: այսպէս թէպէտ համայնք երեքեան անձինք ածայինք համարնթացան 'ի առնել զներմարմնութիւնն Որդւոյն. սակայն որդին միայն է ներմարմնացեալ. և մարդ եղեալ: և ոչ այլքն:

ա, Ընդէր առադրի այսմիկ յօդուածոյ: թէ ծնաւ 'ի Մարիամայ կուսէն:

բ, Վասզի սովաւ ևս յայտնի մեզ մեծ խորհ նորահրաշութին: զի զկնի ինն ամսոց արտելանէ մարմնով որդին ԱԾ 'ի յարգանդէ մօրն իւրոյ. թարց ցաւոյ և վնասու նորին, զորինչ նշան եղանելոյն իւրոյ թողլով 'ի նմա. ըստ որում արար յորժամ յարեաւ 'ի մեռելոց. զի եւ 'ի գերեզմանէն կնքեցելոյ: և յետոյ մինչ

մինչ եմուտ 'ի վերնատունն յո րում էին աշակերտքն իւրք. և եղ 'ի նմանէ դրօքն փակեցելովք. և մտ̃ այսօրէկ ասի, Թէ մայր Տ̃ն մերոյ Յ̃ի Ք̃ի է միշտ կոյս. այսինքն, յառաջ քան զծնունդն :'ի ծնըն դեան, և յետ ծննդեան :

## ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹԻՒՆ
### Չորրորդի Յօդուածոյն :
### Հաւատոյ :

Մեկնեա այժմ զհետևեցեալս. ա, որք պարունակին 'ըն չորրդում յօ դուածոյ. այսինքն, Թէ կրեաց ընդ Պոնտացւոյն Պիղատոսիւ. եղև խաչեցեալ, մեռեալ և Թաղե ցեալ :

Այս յօդուածս պարունակէ զ, զխորհուրդն օգտագունեղ մերոյ փրկութե̃ն. որոյ համառօտութի̃ն է ըստ այսմ: Զի Ք̃ս յետ կենցա

ղո

ղավարելոյն իւրոյ ՚նաշխարհի այսմիկ ԽԲրև զամս երեսուն և երեք. և ուսուցանելոյն մարդկան իւրովք սրբագունեղիւք վարուք, վարդապետութբք, և սքանչելեօք զՃանապարհն կեցութե. եղև ՚ի փոնցիոսէ պիղատոսէ. որ էր Կուսավար յուդայաստանի. անիրաւապէս՝ տանջեցեալ. և բևեռեցեալ ՚ի վր խաչի ուրուք փայտեղինի. ՚ի վր որոյ և մեռաւ. և ՚ի սրբոց ումանց մարդկանց եղև թաղեցեալ։

ա, Շուրջ զայսու խորհրդիւ առդիպին ինձ երկբայութիւք ումանք. և ըղձամ, զի զնոյնս ինձ բացայայտիցես. առ ՚ի առաւելապէս՝ հաճոյ լինիլ այ այնքանեաւ բարերարութեամբ. որքան լուսաւորունապէս՝ զնոյնն իմանայցեմ։

Ասա ինձ ուրեմն. եթէ Քս է որդի Այ ամենակարողի, ընդէր

՚ի հօ

՚ի հօրէ իւրմէ ոչ եղև զերծուցեալ
՚ի ձեռացն Փիլաթոսի։
Եւ մանաւանդ՝ եթէ ինքն ևս է
ԱԾ. վասնէր. ինքն զինքն ոչ ա-
զատեաց։

Քս՟, եթէ կամեցեալ էր. կա վ
րէր բազմօք եղանակօք զերծուցա-
նել զինքն ՚ի ձեռացն Փիլաթոսի։
Այլև բոլոր աշխարհ ո՛չ էր բաւա-
կան զչար ինչ առնել նմա. եթէ
ինքն ո՛չ էր կամեցեալ։
Եւ այս՝ այսպէս՝ գոլ. յայտնա-
պէս՝ անտուստ՝ տեսանի. զի ինքն
Յս՟ գիտէր, որ և նախապատմեալ
էր իւրոյ աշակերտաց։ եթէ յու-
դայեանքն խնդրէին զինքն մե-
ռուցանել. և թէ տանջելոցք էին
զինքն. կատակելոցք, և ապա սպա-
նելոցք։ Բայց սակայն զինքն ՚ի
նոցունց ո՛չ երբէք թաքուցանէր,
այլ գնայր ընդ յառաջ իւրոց թշ-
նամեաց. և յօժարամիտ կամէին զինքն

ըմբռ-

ըմբռնել. և ոչ ճանաչէին զնա.
Նոյնինքն ասէր զինքենէ. Թէ եկեսցէ
ինքն Յս, զոր խնդրեն. և 'ի նմին
ժամու մինչ նոքա յետս չոքան: և
համայնք երբև զմեռեալս անկեալք
էին 'ի յերկիր. ինքն Թէպէտ կա
րէր չուել անտուստ, սակայն ոչ
հեռացաւ 'ի նոցունց. այլ սպասէր
մինչև յուշն նոցա դարձաւ 'ի նո
սա. և մինչ կանգնեցան 'ի յոտին.
ապա Թոյլ ետ ինքեան ըմբռնել.
զոր և ըմբռնեալք կապեցին, և եր
րև զմի գառն հեզ ածէին յա՛ և կա
ափէին:

ա՛ Քս, գոլով անմեղն: վասն էր
Թոյլ ետ ինքեան. 'ի խաչին բևե
ռել անխռովապէս և սպանանիլ:

վ, Ու 'ի վճարել Այ վս մեղաց
մերոց. Թոյլ ետ ինքեան խաչիլ և
սպանանիլ. յաղագս որոյ պար
տիս գիտել. Թէ վիշտն չափի ըստ
արժանաւորութե վշտացելոյն:

և հա

և հակադարձապէս՝ վճարելու
թին չափի ըստ արժանաւորութեն
վճարողին։ զոր օրինակ. եթէ
ծառայ ոք տայցէ զապտակ ումեք
իշխանի. համարեցեալ լինի յան
ցան իմն ծանրագունեղ. ըստ մե
ծութեան իշխանին։
Իսկ եթէ իշխան ոք տայցէ զապ
տակ ումեք ծառայի. լինի համա
րեցեալ փոքու ծանրութեան.
ըստ նուաստութեն ծառային։
Եւ հակադարձապէս։ եթէ ծա
ռայ ոք բռնայցէ զգտակ իւր ա
ռաջի իշխանին։ այս՝ ոչ լինի վար
կեցեալ մեծ ինչ։
Իսկ եթէ իշխան ոք բռնայցէ
զնոյնն առաջի ուրուք ծառայի.
այս՝ լինի վարկեցեալ նշանաւոր
իմն այցելութիւն։ ըստ ռէկու
լայն արդ՝ տուեցելոյ։
Արդ՝ քանզի առաջին մարդն. ը̃
որում և մեք ամենեքեան, վշտա

ցուցաք զա՜ծ. որոյ արժանապա
տուէթին է անհուն, ուրեմն և
վերջանն նմա արարեցեալ. պահան
ջէ զվճարելութիւն անհուն:
Եւ վասն զի ոչոք գոյր մեզ. ոչ մարդ,
և ոչ հրեշտակ, այնքանւոյ արժա
նաւորութե. վ՜ն որոյ եկն որդին
ա՜յ, որ գոլով ա՜ծ. ունի զանհուն
արժանաւորութի. առնլով զմար
մին մահկանացու, որով մարմնով
վ՜ն պատուոյն Ա՜յ ենթադրեցաւ
մահու Խաչին. և այսպէս՝ վճա
րեաց համալրապէս՝ պատժիւ իւ
րով. վ՜ն մերոց յանցանաց:

ա, Բաց յայսմանէ գոյ արդեօք
այլ ի՜նչ պատճառ. յաղագս որոյ
Ք՜ս կամեցաւ կրել զայնպիսի դառ
նակսկիծ մահն:

վ. Այո, գոյ այլ ի՜նչ պատճառ. որ
է. զի ուսուսցանիցէ մեզ իւրով
օրինակաւ զգործութի. համբերու
թն. խոնարհութե հնազանդութե.

և սիրելութն. որք են չորս զօրու-
թիւնք, նշանակեցեալ 'ըն չորս
ծագս խաչին. վնզի ոչ կարէ գտա-
նել մեծագոյն համբերութն. քան
զկրելն անիրաւապէս՝ զմահ իմն
այնքան վատահամբաւական։
ոչ մեծագոյն խոնարհութն, քան
զենթարկել տն տերանց ամենից
չարչարանաց համայնից. և զգոլն
բևեռեցեալ 'ի խաչի 'ի մէջ երկուց
աւազակաց։ ոչ մեծագոյն հնազան-
դութն. քան զկամիլն մանաւանդ
մեռանիլ. քանթէ ոչ համաձայնուլ
զպատուիրանս Հօր։ և ոչ մեծա
մեծագոյն սիրելութն. քանթէ
դնել զկեանն իւր վասն կեցուցա-
նելոյ զթշնամիս իւրս։
Գիտեա՛ և զա՛յս, որ՝ սիրելութին
գործով առաւել քանթէ բանիւ
ապացուցանի. որ ևս կրելով յաւ-
էտ. քանթէ առնելով հաստատի։
Ա ոսոյ՝ Տրն մեր Քն. ոչ միայն
կա

կամեցաւ առնել զանհունս բարե
րարութեա. այլ հաճեցաւ ևս
կրել. և մեռանել վն մեր. զի ապա
ցուցանիցէ զիւրն ջերմեռանդա
պէս՝ սիրելն զմեզ:

Հա Եթէ Քն է ած և մարդ. ո՞պ՚ի
վերոյ ասացեր. և ո՛չ Թուէի, Թէ
ած կարիցէ կրել, և մեռանել. զի
արդ՝ ուրեմն ասեմք. եԹէ Քն
կրեաց, և մեռաւ:

Պ, Քն, զի է ած և մարդ. վն այնո
րիկ կարէր համանգամայն՝ կրել.
և ո՛չ կրել: մեռանիլ և ո՛չ մեռանիլ:
Քանզի ըստ որում է՛ ած, ո՛չ կա
րաց կրել. և ոչ մեռանիլ. իսկ ըստ
որում է մարդ, կարաց կրել. և մե
ռանիլ: Ան այսորիկ ասացի քեզ.
Թէ այն՝ որ էր նախ ած միայն. յե
տոյ՝ եղև և մարդ, առ՚ի վճարելոյ
Այ վն մերոց մեղաց. առբերելով
զպատիժ մահու ՚ըն մարմնոյ և
բուն սրբագունեղի. զոր ոչ կարա
ցեալ

ցեալ լիցէր առնել եթէ ոչ եղեալ
լիցէր մարդ ։

Եթէ Քս̃ վճարեաց Հօր վս̃ ա-
մեղաց ամենից մարդկանց. ուստի՞
ուրեմն ծնանի, զի այնքան մար-
դիկք դատապարտիցին ։

Եւ զի մեք պարտիցիմք առնել զա-
պաշխարութի̃ վս̃ մեղաց մերոց ։

Թէպէտ՝ Քս̃ վճարեաց վս̃ մե-
ղաց ամենից մարդկանց. սակայն
է հարկաւոր առադրել զնոյն
վճարելութին Քի մասնաւորա-
պէս՝ այսմիկ, կամ այնմիկ, հաւա-
տով. սրբազնութե̃ք, և բարեօք
գործօք. և մանաւանդ ապաշխա-
րութեամբ ։

Աս̃ այսորիկ ուրեմն պարտէ առ-
նել զապաշխարութի̃, և զգործս
բարիս, թէ և Քս̃ լցէ կրեալ. և
գործեալ վասն մեր ։

Եւ վասն այնորիկ. տակաւին բա-
զումք դատապարտին ։ կամ թէ

յաղա

յարամնան Թշնամիք ընդ մ͞յ. զի
կամ ոչ կամին ունել զճշմարիտ և
զուղիղ հաւատն. որպիսիք են յու
դայեանքն. Թուրքն. և հերետի
կոսքն: կամ ոչ կամին առընդունիլ
զսրբազնութիւնս. որպիսիք են այ
նոքիկ. որք ոչ կամին մկրտիլ. կամ
խոստովանիլ: և կամ ոչ կամին ու
նել զայն ապաշխարութի͞ն, զոր կա
րեն վ͞ս մեղաց իւրեանց առնել:
Որք և ոչ կամին աղեղերել զին
քեանս կեալ և կենցաղավարել ը͞ս
օրինացն Ա͞Յ:
ա, Կամիմ. զի տայցես ինձ զօրի
նակ ինչ առ՚ի իմանալ բարեպէս՝
զվերոյ ասացեալսն:
բ, Կալ.քեզ ՚ի յօրինակ զայր ոք. որ
սաստկապէս՝ իցէ աշխատեցեալ
և իւրովք քրտամբք. և երկամբք
վաստակեալ իցէ զայնքան դե
նարս, որքան իցէ բաւական առ՚ի
վճարել զընտանս պարտիս բոլորի

այսորիկ քաղաքի։ որք զփողո
խուրս եդեալ իցէ առ սեղանաւոր
ղք. որում և պատուէրեալ իցէ.
տալ այնց համայնից. որք զհրամա
նագիր յինքեանս առնու բերիցեն։
Արդ՝ թէպէտ այրս այս՝ յուրմէ
սակէ և քսակէ իրաէի իցէ վճա
րել զպարտիս համայնս այսոցիկ
քաղաքացեաց պարտաւորաց. սա
կայն կարէ լինել. զի բազումք 'ի
նոցունց տակաւին պարտաւորք
յարամնայցեն. վ̃զի կամ վ̃ն հր
պարտուե̃. կամ վ̃ն ծուլութե̃.
և կամ վ̃ն այլոց պատճառաց ոչ կա
մեցան գնալ առ 'ի հայցել զհրա
մանագիր 'ի փողատեառնեն. և բե
րել զնոյն առ սեղանաւորն. զի
առնուցուն 'ի նմանէ զդենարս
բաժականս վճարելոյ զպարտիս
իւրեանց։ Ահա այսու օրինա
կաւ կարես իմանալ զվճարելն
Ք̃ի վասն մերոց մեղաց։

Եւ թէ ո՞վ մեք պարտեցիմք առա
դրել մեզ զվճարելութեն նորին։

# Պ ԱՐԶԱԲԱՆՈՒԹԻւՆ
## Հինգերորդի յօդուածոյն Հաւատոյ։

ա, Ա՞ իմանալոյ զհինգերորդ յօ
դուածն հաւատոյ. որ ասէ. էջ
՚ի դժոխն. ՚Ներրորդում աւուր
վերյարեաւ ՚ի մահուանէ։
Ցանկամ գիտել. թէ զինչ նշա
նակեցէ ՚նայսմ տեղւոջ. դը
ժոխն։

վ, Դ ժոխն է ստորագունեղ, և
խորագունեղ տեղի իմ̃ն աշխար
հիս, այսինքն, մէտն երկրիս այսո
րիկ, որ է միջակէտն նորին. և վ՞
այնորիկ գրածն սբ̃ ՚ըն բազումս
տեղիս, զերկինն հակադրէ դժո
խոյ, իբրև զտեղի բարձրագու
նեղ, տեղւոյն ցածագունեղի։

Արդ՝

Արդ՝ ՚Նայսմիկ երկրի խորխորա-
տում, գոն չորս իբրև զմեծամեծս
խորափոյտս, որոց մինն, որ է խոր-
գունեղն այլոց, է վ̃ն դատապար-
տեցելոց։ քանզի յոյժ պատկանի
հպարտաց դիւաց, և մարդկանց
նոցա հետևողաց, զի եցեն ՚ըն տե-
ղւոյ ստորագունեղի, և ՚ի դրախ-
տէն հեռագունեղի. Իսկ երկրոր-
դում խորափոտում, որ է սակա-
ւինչ վերագոյն քան զառաջինն,
գոն հոգիք, որք դեռևս կրեն զպա-
տիժ քաւարանին։
՚Ի երրորդումն. որ է ևս վերա-
գոյն քան զերկրորդն, գոն հոգիք
այնոցիկ երախայից, որք թարց
մկրտութեան են մեռեալք. որք թէ
պէտ՝ ոչ կրեցեն զտանջանս հրոյ-
տական են զրկեցեալք յարակայ-
ապէս՝ ՚ի յաւիտենականէ յեր-
ջանկութենէն։
՚Ըն չորրորդումն, որ է վերագոյն
քան

քան զա̃մ, կային հոգիք պատրիար
քաց և մարգարէից, և այլոց սր̃ց,
որք էին մեռեալք նախքան զգա
լուստն ք̃ի. վ̃զի թէպէտ հո
գիքն այնորիկ, զոչինչ քաւելի ու
նէին, սակայն ոչ կարացին մտա
նել 'ի փառսն երանելի, յառաջ
քանթէ ք̃ս մահուամբ իւրով բա
ցեալ էր զդուռն կենաց յաւի
տենականաց. վ̃որոյ կային 'նայն
միւ մասին վերագունի կոչեցելում
Լիմպոս Հարցն մերոց. կամ թէ
գոգ Աբրահամու. 'Ն որում զոչ
ինչ պատիժ կրէին, այլ մանաւ
անդ հրճուէին քաղցերբ ամամբ
անդորրութբ̃, սպասելով գալըս
տեան Ք̃ն մեծաւ ցնծութբ̃. որպ̃
ընթեռնումք 'նաճեմարանում,
թէ հոգի այնորիկ սրբոյ մուրաց
կանն Ղազարու եղև տարեցեալ
'ի հրեշտակաց առ'ի հանգուցա
նել 'ըն գոգում Աբրահամու.

ծով խրախճանացըր փարթամն մինչ
պապակէր 'ի մէջ բոցոյ դժոխոյն
մերացուցեալ զաչս իւրս եւտես ըզ
Ղազարոս 'ի նմին տեղւոջ մերա
գունեղի, որ կայր մեծաւ խնդու
թե̃ և մխիթարութե̃ վայելելով
զպտուղս իւրոյ աստ համբերու
թեան:

Աւ որն, 'ի չորից յայտացանէ մա̃ ս-
սանց դժոխոյն էջ Քս̃ զկնի մա
հուան իւրոյ,

Ոչ գոյ երկբայութիւն, եթէ վ-
Քս̃ իցէ իջեալ 'ի Լիմպոսն սրբոց
հարց, զորս և առժամայն երանէ
ցեալս իցէ արարեալ. և յետոյ ը̃
ինքեան առ երկնից արքայութի̃ն
իցէ զնոյնս վերածեալ:
Որև ցուցեալ իցէ զինքն այլոց
մասանց դժոխոյն. զարհուրեցու
ցանելով զդևս. իբր. քաջայաղթող
ախոյեան. ահացուցանելով զդա
տապարտեցեալս, ո՛պ դերադու
նեղ

նեղ դատաւոր. և մխիթարելով զհոգիսն քաւարանին իբր փաստաբան նոցա և աղաւթիչ: քանզի Ք͞ս էջ 'ի դժոխսն, ոմ̃ սովորէ Թգ̃րն երբեմն իջանել 'ի բանտս վ͞ս այցելութե՛ անդ՝ եղելոց, և վ͞ս առնելոյ զշնորհս այնոցիկ, որք հաճոյք ինքեան Թուէցին:

ա, Եթէ Ք͞ս մեռեալ էր, և մարմին նորին անկեալ դնիւր 'ի գերեզմանում. ապաուրեմն՝ ոչ էջ 'ի դժոխսն Ք͞ս բոլոր, այլ միայն հոգին Ք͞ի, զի արդ ուրեմն ասե Թէ Ք͞ս էջ 'ի դժոխսն:

բ, Մահն ունեաց զօրութիւն բաժանելոյ զհոգին Ք͞ի 'ի մարմնոյ նորին, բայց ոչ կարաց բաժանել զԱծային անձն Ք͞ի, ո՛չ 'ի հոգւոյ, և ոչ 'ի մարմնոյ նորին. և վ͞ս այսր՝ հաւատամք զանձն Ածային Ք͞ի կացեալ ընդ մարմնոյ նորին 'ի գերեզմանում, և զնոյն անձն ընդ

հո

հոգւոյ նորին իջեալ 'ի դժոխն.
ուստի ուղղապէս ասի, թէ Քս̃
էջ 'ի դժոխն։

Զիարդ՝ ճշմարտի եթէ 'ն եր֊
րորդում աւուր յարուցեալ եցէ
Տէրն 'ի մահուանէ. որովհետև 'ի
յերեկոյէ ուրբաթուն 'ն որում
թաղեցաւ Քս̃, մինչև յառաջին
գիշերն կիրակէին 'ն որում վերյա
րեաւ, և ոչ երկու աւուրք են ամ
բողջք։

Ոչ ասեմք, թէ Քս̃ եցէ յա֊
րուցեալ զկնի երից աւուրց ամ
բողջից, այլ 'նաւուր երրորդում.
որ է ճշմարտագունեղ իմն. զի ե
կաց 'ըն գերեզմանում 'նաւուր
ուրբաթի, թէպէտ՝ ո՛չ ամբողջի։
եկաց 'ի նմին և 'նաւուր շաբա
թի, որ է օր երկրորդ։ եկաց և
անդ՝ զմասն ինչ կիրակէի, որ է օրն
երրորդ։ քանզի աւուրքն բնա
կանք սկսանին 'ի յերեկոյէ նախըն

թա

Թացէ. զի 'ի նմին ժամու մինչ
ժամացոյցքն մերք ցուցեն զքսան
և չորս ժամն, դարձեալ սկսանին
ցուցել զժամն առաջին:
ա. Ոչ աղագաւ Ք՟ի ոչ յարեաւ
խոկոյն զկնի մահուն իւրոյ. այլ կա
մեցաւ սպասել զերիս աւուրս:
բ. Զի կամէր ցուցանել, թէ ճըշ
մարտապէս էր մեռեալ. վ՟որոյ
կամեցաւ մնալ այնքան 'ընդ գերեզ
մանում, որքան էր բաւական առ
'ի ապացուցանել զայս ճշմարտու
թիւն: Կամիմ և զայս, զի նկա
տեսցես թէ, որպէս Ք՟ի եկաց
'նայսմիկ կենի 'ի մէջ մարդկանց
զամս երեսուն և երեք. կամ երե
սուն և չորս, այսպէս կամեցաւ կե
ալ 'ի մէջ մեռելոց` գոնեա զժամս
երեսուն և երեք, կամ երեսուն և
չորս. քանզի այսքան ժամք լինին,
եթէ դնիցես խմիասին զմի ժամ
յօրէ ուրբաթոյն, զի 'ըն ժամու
քսան

քսաներեքերորդում եղև Թաղե
ցեալ զքսան և չորս ժամս առ
ուր շաբաԹուն. և զուԹն, կամ
զինն ժամս 'ի կիրակւոյ. վզի յա
րեաւ Քս զկնի մէջ գիշերոյն ընդ
սկզբան արշալուսոյն:

Ընդէր, վասն Քնի ասի Թէ յա֊
րեաւ, իսկ վասն այլոց մեռելոց,
որգոն. վս Ղազարու, և վասն
որդւոյ այրւոյն ասի, Թէ եղեն
յարուցեալք:

Պատճառն է, զի Քս գոլով վ֊
որդի Այ յարեաւ ինքն ըստ ին
քեան; այսինքն, զօրուԹեամբ
իւրոյն ածուԹն, և դարձաւ 'ի
միաւորել զ հոգին իւր ընդ մար
մնոյ իւրում, և այսպէս սկսեաց
կեալ նորապէս: Իսկ այլք մեռ
եալքն ոչ կարեն դառնալ 'ի
կեանս իւրով յատկաւ զօրուԹբ.
այլ աղագաւ ասի, Թէ եղեն յա
րուցեալք յայլոց. ըստորում և
մեք

մեք ամենեքեան նաւուրն դա
տաստանի եղիցուք յարուցեալք
՚ի Քս̃է:

ա, Իցէ արդեօք այլիմն տարբե
րութի՛ ՚ի մէջ յարութե̃ն Քի̃,
և այլոց, որք նախքան զնա, վե
րադարձան ՚ի կեանն:

բ, Գոյ այսինչ տարբերութիւն:
զինոքա՛ եղեն յարուցեալք մահ
կանացուք, և վ̃սայնորիկ միւսան
գամ դարձեալ մեռան:
Իսկ Քս̃ յարեաւ անմահ, ուս
տի ոչ կարէ դարձեալ մեռանիլ:

## ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹԻւՆ
### Վեցերորդի յօդուածոյն:
### Հաւատոյ:

ա, Այժմ եկեսցուք առ վեցերորդ
յօդուածն. որ է վասն համբարձ
մանն Քրիստոսի:
Զի բաղձամ գիտել, թէ զորքան
ժա

ժամանակ եկաց Տ՟րն 'ի յերկ
րումն յետ՝ յարութ՟ե իւրոյ. և թէ
վ՟ն ո՞յր պատճառի այնքան, եկաց
'ի յերկրում։

Եկաց զքառասուն օր, որպէս Վ.
կարես նկատել, թուելով զաւ
ուրս, որք են 'ի տօնէ յարութենն
մինչև 'ի տօն համբարձմանն։
և պատճառ այսորիկ երկարագու
նի յարամնացման եղև. զի կամե
ցաւ Ք՟ս յոլովիւք և զանազանիւք
երևելութ՟եք հաստատել զխոր
հուրդ իւրոյ ճշմարտագունեղի
յարութ՟ե. վ՟զի նա, է իբր դժու
արագոյնն այլոց խորհրդոց, և որ
հաւատոյ զնոյնն, զոչինչ դժուա
րութ՟ի ունել կարէ առ'ի հաւա
տալ զայլս. զի որ յաւնէ, նա
հաւաստապէս նախ մեռեալ էր.
և որ մեռեալ էր, նա նախ ծնե
ցեալ էր։ ուրեմն որ հաւատայ
զյարութիւնն Ք՟ի, 'ի նմին ոչ

Մնայ դժուարութիւն հաւատալոյ 'ի մահն և 'ի ծնունդն նորին Քի։ Եւ զի փառաւորի մարմնոյ ո՛չ վայելէ բնակիլ 'ներ երկրի. այլ 'ներ երկնի։ ուստի նմանապէս, որ հաւատայ զյարութիւնն կեցուցչին, դիւրապէս կարէ հաւատալ և զելն նորին 'ի յերկինս։

ա, Կամիմ իմանալ զպատճառն. Թէ վո՛ւր ասի, Թէ Քս համբարձաւ 'ի յերկինս, իսկ զսրբագունեղէ մօրէ նորին ասի, Թէ եղև վերընկալեալ. և ոչ ասի, Թէ համբարձաւ։

բ, Զպատճառն սորին դիւրին է գիտել, զի Քս, որպէս ԱԾ և մարդ իւրով յատկաւ զօրութբ ե՛լ 'ի յերկինս, ըստ որում ևս իւրով յատկաւ զօրութբ յարեաւ։ Իսկ մայրն նորին, որ էր լոկ ստեղծուած, Թէպէտ 'ի մէջ այլոց արժանապատուականագունեղ. ոչ

իւ

եւրով յատկաւ զօրութբ, այլ զօ
րութբն Աճ եղև յարուցեալ,
և վերածեցեալ յարքայութեն
երկնային։

Զինչ արդեօք կամիցի ասելն. ա,
Նստի ընդ աջմէ Աճ Հօր ամե
նակարողի։

Մի գուցէ երևակայացուցանի վ,
ցես քեզ, թէ Հայրն նստէ ընդ
ձախմէ որդւոյն. կամ թէ, հայրն
նստէ միջին, որ ունիցի ընդ յաջմէ
իւրմէ զՈրդին, և ընդ ձախմէ ըզ
Հոգին ոբ մարմնաւորապէս, քան
զի, որպէս Հայրն, այնպէս և Որ
դին ըստ իւրում ածութն, այն
պէս և Հոգին սուրբ, կան ընդ հա
մայնս տեղիս. և ոչ կարէ ասել,
թէ ումն 'ի նոցանէ կայ ընդ յաջմէ
կամ ընդ ձախմէ միւսոյն խօսելով
յատկապէս։

Բայց կալն ընդ յաջմէ, կամի
ասել 'նայամէնկ յօդուածոջս. ըզ
գոյն

գոլն հաւասար բարձրութե՛, փա
ռօք, և հանդիսաւորութե՛, զի
որ կայ առ կողմն միւսոյն, ոչ է
բարձրագոյն, կամ ցածագոյն
քան զնա, այլ է հաւասար նմա։
Ա̃որոյ գրածն որբազան զայսպի
սի խօսելոյ եղանակ մեզ իմացու
ցանելոյ աղագաւ, 'ըն հարիւր և
ինն սաղմոսում, որոյ սկիզբն է,
Ասաց տ̃ր ցտ̃ր իմ, մերթ ասէ,
Թէ որդին նստի ընդ յաջմէ Հօր,
և մերթ ասէ, Թէ Հայրն կայ ընդ
յաջմէ որդւոյն։ որպէսզի ծանու
ցանիցէ մեզ, եթէ կայցեն 'ըն
հաւասարում գերակայութե. ըստ
որում արդ՝ ասացաք։
Զի Քս̃, մինչ համբարձաւ 'ի յեր
կինս, ել 'ի վեր քան զա̃մ դաս և
զկարգ հրեշտակաց, և սրբոց հո
գւոց, զորս յայնժամ վերածեր
ընդ ինքեան. և ժամանեաց առ
բարձրագունեղ գահն Այ̃, և 'ի
նմին

նմին զկայ էառ, ոչ ելանելով 'ի վեր քան զՀայր, և ոչ մնալով 'ի վայր քան զնա, այլ զետեղելով զինքն, զի այսպէս ասիցեմ, առ կողմն Հօր, իբրև Հանգէտ նմա փառօք և մեծութեամբ:

Ես զի Քս է Այ և մարդ. ուս տի կամիմ գիտել. եթէ նստի նա ընդ յաջմէ Հօր, ըստ որում Այ միայն. թէ ըստ որում և մարդ ևս: ա.

Քս, ըստ որում Այ, է Հաւասար Հօր, իսկ ըստ որում մարդ է փոքրագոյն քան զՀայր: վ.

Բայց սակայն, զի Քս, Այ և մարդ ոչ են երկու քրիստոսք, և ոչ երկու անձինք. այլ մի Քս միայն, և մի անձն միայն, վասն որոյ ասի, թէ Քս Այ և մարդ նստի ընդ յաջմէ Հօր: և այսպէս մարդկութիւն Տն, այսինքն: մարմին, և Հոգի նորին կան 'ըն գահոյ

Այ

Ա՛ծայնոյ ը՛դ յաջմէ Ա՛Յ հօր.
ոչ սակս եւրոյ յատկի արժանա
պատուութեան, այլ զի է միաւորե
ցեալ 'ի յանձն Ճշմարտի· եւ ընա
կանի որդւոյն Ա՛Յ:

ա, Կամէի զօրինակ ինչ առ'ի իմա
նալ պարզագունապէս զայս, զոր
ասացեր:

վ, Կալ քեզ 'յօրինակ զծիրանին
արքունի: յորժամ թագաւորն
զգեցեալ զծիրանին իւր, նստի
'ըն իւրում գահոյջ արքունւոյ, եւ
այլք համայնք իշխանք նորին
թագաւորութե, նստին ստորե
քան զնա՛. յայնժամ ծիրանին այն
արքային, լինի զետեղեցեալ 'ըն
տեղւոջ գերագունի քան զտեղիս
իշխանաց: քանզի նստի 'նաթո
ռոջ թագաւորին. Եւ այս լինի,
ո՛չ զի ծիրանին իցէ արժանապա
տութե̃ հանդէտ թագաւորին,
այլ զի յարակցեցեալ է թագաւ

տրին, իբրև զիւր յատուկ զգեստ։ Այսպէս ուրեմն, մարմին և հոգին Քի՟ նստի գեր քան զքերոբէս և սերոբէս 'ընդ նոյնում աթոռոջն Այ՟, ոչ արժանաւորութե՟ իւրոյն բնութե՟, այլ գոլով միաւորեցեալ Յա՟ծ, ոչ միայն իբրև զզգեստն Թագաւորին, այլ յոյժ յաւէտ առաւելապէս այսինքն, միաւորութե՟ անձնաւորականաւ յարակցեցեալ է յանձն բանին Այ՟. որպէս ասացաւ 'ի վերոյ։

## ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹԻւՆ
### Եօթներորդի Յօդուածոյն Հաւատոյ։

Ուստի գալոց է 'ի դատել ըզ ա, կենդանիս և զմեռեալս։ յե՞րբ արդեօք լինելոց իցէ այս դալուստ Տեառն։

Լինելոց է 'ի վաղճանի աշխար վ.

հիս։ սակաւորոյ պարտիս գիտել․ Թէ աշխարհս այս ունելոց է ըզ փաղձան, և ամենայն շինուած նորին աւերելի է հեղեղաւ հրոյ, որ հրդեհեսցէ զա՟մ ինչ, որ գոյ ՚ի վ՟ր երկրի, և այնուհետև ոչևս եղիցին տունք և գիւղերք, ամուսնութիւք, և վաճառք։ և ոչ այլք իրք ամենայնք, զորս այժմ տեսանես։ և այսպէս ՚ըն վերջնում աւուր աշխարհիս այսորիկ, զոր ոչոք կարէ գիտել, թէ որքան իցէ մերձաւոր, կամ հեռաւոր. եկեսցէ Քս՟ յերկնէ առ՚ի անել զդատաստան ըն՟ հանրական։

Այլև խօսս այս ուսոտն գալոց է. վարդապետէ մեզ ոչ հաւատալ ումեք, որ ասիցէ զինքն գոլ Քս՟, և զմեզ պատրել կամիցի, ըստո րում արասցէ նեռն մերձ փաղձանի աշխարհիս. քանզի ճշմարիտ Քս՟ն ոչ ՚յանտառէ ումեքէ,

կամ

կամ յայլմէ անյայտէ տեղւոջէ
եկեացէ, այլ՚ի գերակայէ երկնէ,
այնքանեօք փառօք, և հանդիսա
վեհութե՛, մինչ զի ոչոք երկբայ
իլ կարիցէ, թէ իցէ նա, թէ ոչ. զի
ծով մինչ ծնի արեգակն, այն քա
նեաւ վերադայի լուսով, մինչ զի
ոչոք կարէ երկմտիլ, թէ իցէ ա
րեգակն ծագեցեալ, թէ ոչ. այս
պէս և գալուստն Քրի եղիցի է:

Ընդէր ասեմք, թէ դատելոց ա
է զ կենդանիս, և զմեռեալս: մի
թէ ՚ի նմին ժամու ոչ եղիցին
մարդիկք համայնք մեռեալք և
վերստին յարուցեալք:

Ասո՛ զկենդանեաց և մեռե
լոց կարեն իմանիլ բարիքն, որք
կեամբ հոգևորաւ շնորհացն
կեան, և տխուրքն, որք են հոգև
որպէս մեռեալքն ընդ մեղօք:
Թէև այս ևս իցէ Ճշմարիտ, թէ
եկեացէ Քսն ՚ի դատել և զբա

մարմ

մարմնոյ. զկենդանիս և ըղձե
ռեալս, զի ՚ն աճուր այնմիկ բա
զումք եղոցք են, արդ՝ մեռեալք,
յոքունք ևս գտանելոցք են կեն
դանիք: որք Թէպէտ ՚ի նմին
աճուր վերջնում դեռևս՝ կեն
դանիք եղիցին, յորոց ոմանք տա
կաւին մանկունք, եղոցք են կամ
երեխայք. սակայն ամենեքեան
՚ըն միում վայրկենի խմիասին մե
ռանելոցք են, և խոկոյն դար
ձեալ յառնելոցք, առ՚ի վճարել
զպարտիս մահուան:

ա, Բազմիցս՝ լուեալ եմ. Թէ որ
մեռանի մեղով մահկանացու,
առժամայն գնայ ՚ի դժոխս, և
որ մեռանի ՚ի շնորհս Այ, առժա
մայն գնայ ՚ի քաւարանն, կամ
՚ի դրախտն: զխորդ ուրեմն ամե
նեքեան դատիլ պարտիցին, մինչ
արդէն՝ ամենեքեան զվճիռս ի
րեանց ընկալեալք իցեն:

՚Ըն մա

Ըն մահուան իւրաքանչիւրոյ վ. լինի մասնաւոր դատաստան հոգւոյն այնորիկ, որ յայնժամ ելանէ 'ի մարմնոյն. իսկ յետոյ յաւուրն վերջնում ելոց է ընդհանրական դատաստան ամենայնի աշխարհի. և այս վն բազմաց պատճառաց: Նախ վասն փառացն Այ, քանզի բազումք այժմ տեսանելով զչարագործս 'ի յաջողութե, և զբարեգործս 'ի վշտակրութե. խոկան ներ յինքեանս, թէ ԱՅ ոչ բարեպէս կառավարէ զաշխարհ: Բայց յայնժամ երևեսցի յայտնապէս թէ որպէս ԱՅ տեսեալ իցէ և նշանակեալ զերս համայնս: և թէ ոմն մեծաւ իւրով արդարութբ տուեալ իցէ չարաճրճկաց զյաջողութե իմն ժամանակաւոր, առ'ի արատորել նոցա վն սակաւուց գործոց բարեաց, փոքրագունի միտի, զի

տայ

տայցէ նոցա զյաւիտենական պատիժ վասն մահացուաց նոցին մեղաց։ Եւ հակադարձապէս թէ ոք տուեալ իցէ բարեգործաց ըղժամանակաւոր ինչ վշտակրութիւն, առ՚ի պատժել զնոսա վասն ոմանց մեղաց ներելեաց. կամ թէ առ՚ի տալ նոցա զնիւթ ապաշխարութեան, զի յետոյ փարթամացուսցէ զնոսա գանձիւ փառաց անհնիւ, վս՟ գործոց նոցին բարեաց։ Երկրորդ վասն փառացն Քի, զի որ եղև անիրաւապէս ՚ի մահ դատապարտեցեալ, և ՚ի բազմաց ոչ ճանաչեցեալ ուղղապէս և ոչ պատուեցեալ վայելչապէս. եր իրաւի նմա պատշաճ, զի գայցէ ՚ըն միում աւուր, ՚նորում բոլոր աշխարհ ճանաչիցէ զնա, և պատուիցէ, ուժով, և ահրով. իբրև զճշմարիտ թագաւոր, և Տր՟ համայնից։

Երրորդ

Երրորդ վն փառաց սրբոցն, զի նոքա. որք 'նաշխարհի այսմիկ էին հալածեցեալք և տանջեցեալք, տեառնիցին 'ի համայնից. Թէ ով ԱԾ իցէ փառաւորեալ զնս: Չորրորդ վն յամօթ առնելոյ զհպարտս թշնամիս ԱՅ: Հինգերորդ զի մարմինն իմիասին ը̃ հոգւոյն ընդունիցի զիւրն վճիռ փառաց կամ պատժոց:

## ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹԻՒՆ
### Ութերորդի Յօդուածոյն: Հաւատոյ:

Յօդուածն ութերորդ ասէ. ա, Հաւատամ 'ի Հոգին սբ:

Զինչ արդեօք իցէ Հոգին սբ:

Ըստ բացայայտի մեզ երրորդ վ. անձն սրբագունեղի երրորդութե, ով 'նառաջնում յօդուածոյ բացայայտեցեալ եղև առաջին

ջին անձն. և 'նայլս հետևե-
ցեալս երկրորդն ։ զի Հոգին սբ
ոչ է Հայրն, և ոչ Որդին. այլ
երրորդ իմն անձն, որ յառաջա-
գայի 'ի Հօրէ և յորդւոյ իմիասին,
և է Ճշմարիտ ԱԾ, իբրև զՀայրն
և Որդին ։ այլև է՛ նոյն ԱԾ ընդ
Հօր և Որդւոյ, զի ունի զմի և
զնոյն ԱԾութի, որ գոյ 'ըն Հօր
և Որդւոյ ։

ա, Կամիմ, զի տայցես զօրինակ
իմն, առ 'ի բարեպէս իմանալ ըզ-
նոյնս ։

վ, Իբրև Աստուածայինք ո՛չ կարեն կա-
տարելապէս բացայայտիլ օրինա-
կաւ իրաց ստեղծականաց, և մա-
նաւանդ՝ մարմնականաց, սակայն
կալ քեզ զօրինակ 'ի լճէ իմեքէ.
որ յառաջագայի 'ի գետոյ ու-
մեմնէ, իսկ գետն 'ի միոջէ յաղ-
բերէ. որք երեքեանն են իբր
թէ մի և նոյն ջուրն ։

Այս

Այսպէս ուրեմն Հայրն յաւի-տենական իբրև զաղբիւր յառաջածէ զՈրդին իբրև զմի գետ. Իսկ՝ Հայրն և Որդին իբրև զաղբիւր և զգետ յառաջածեն զՀոգին սբ̃ իբրև զլիճ։ այլ սակայն Հայրն, և Որդին, և Հոգին սբ̃ ոչ են երեք ա̃ծք, այլ մի միայն Ա̃ծ։

Ընդէ՞ր կոչի Հոգի սբ̃, երրորդ անձն երրորդութե̃։ մի թէ ոչ իցեն հոգիք, և սուրբք, հրեշտակք ամենայնք, և համայնք երանեցեալք Հոգիք։

Ա̃ծ, ըստ գերազանցութե̃ կոչի Հոգի սբ̃, զի է գերագունեղ հոգի, և գերագունեղապէս սբ̃, և է հեղինակ ամենից հոգեաց ստեղծականաց, և բնաւէից սրբութե̃ց։ զօրօրինակ ՚ի մէջ մարդկանց բազումք գոն, որք հարք են, և սուրբք. կամ ըստ պաշտօնի,

կամ ըստ բարութե կենաց, որ
պէս են յաջողնք բարեք եպիսկո
պոսք, կամ հարք, կամ կրօնաւ
որք. սակայն ոչ ումեք ասի, Հայր
սուրբ, եթե ոչ փափին միայնում
զի նմա միայնում պատշաճի ըստ
գերազանցութե այս անուանս, զի
նա է գլուխ այլոց հարց ամենե
ցունց: ուստի պարտի լինիլ ա
ռաւել սուրբ ըստ բարութե կե
նաց քանզայլս ամենայնս: այս
պէս և ըստ պաշտօնի, զի յարա
բերի մեզ ինքեամբ զդեմն Քի:

Աշ. Եթե անուանս այս Հոգի սբ
պատշաճի Այ ըստ գերազանցու
թե: Ընդէր ուրեմն առընձեալ
միայնում երրորդի անձինն Այ:
մի թե Հայրն ևս, և Որդին ըստ
գերազանցութե ոչ իցեն, Հոգի,
և սուրբ:

Վ. Այո, Հայրն ևս և Որդին են
հոգի, և սբ: Բայց քանզի առա
ջին

ջին անձն ունի զանուն իւր ին
քեան յատուկ, այսինքն, Հայր։
այսպէս և երկրորդ անձն, ունի
զյատուկ անուն ինքեան. ո՛րգոն,
Որդի։ Իսկ անձին երրորդում
Թողեցեալ է անունս այս հասա
րակ. Հոգի սբ, առ՚ի զանազանել
զնա յայլոց անձանց երկոցունց.
Այլև պարտիս գիտել, զի մինչ
մի երրորդի անձինն ածայնոյ,
ասի Թէ իցէ Հոգի սբ, այնոքիկ
երկու բառքն առնեն զմի միայն
յատուկ անուն։ որպէս մինչ մարդ
ոք կոչի, Յոհաննէս Մարիամ.
յայնժամ այսոքիկ երկու բառքս
Յոհաննէս, և Մարիամ. են մի
միայն անուն. Թէպէտ այլապէս
առեցեալք, իցեն երկու անուա
նք, Յոհաննէս և Մարիամ։

Ընդէր զՀոգին սբ նկարեն ա,
ձևով աղաւնւոյ։ մանաւանդ՚ի վր
Քի, և ՚ի վր Ածածնին։

Մե

Դ. Մի՛ գուցէ խորհիցես, թէ հո
գին ոչ ունիցի զմարմին. կամ
թէ կարիցէ տեսանել աչօք մարմ
նաւորօք: այլ նկարի այնպէս, զի
իմանիցեն գործքն նորին, զորս
ներգործէ 'ըն մարդս:
Եւ զի աղաւնին է պարզ, մա
քուր, նախանձայոյզ, և բազմա
ծնունդ, վասորոյ նկարի այնպէս
'ի վր̃ Քի, և'ի վր̃ Ա̃ծածնին, ոպ̃զի
իմանայցեմք. թէ Քս̃ և Ա̃ծա
ծինն եղեն լրացեալք համայնիւք
շնորհօք, և պարգևօք Հոգւոյն
սրբոյ, և մասնաւորապէս սրբով
պարզութը̃, իսկականաւ մաքրու
թը̃, նախանձով հոգւոյ կեցու
թե̃, և բազմածնելութը̃ հոգևո
րաւ, որով ստացան իբրև զան
հունս որդիս, այսինքն, ըզհա
մայնս հաւատարիմս, և զբարիս
քրիստոնեայս:
Ե. Ընդէ՞ր 'ի վր̃ առաքելոցն նկարի

Հոգին սուրբ ՚ի կերպ լեզուոյ
հրեղինի։

Զի Հոգին սբ, յետ համբարձ
ման Տն զկնի տասն աւուրց եկն
՚ի վր առաքելոց, և ելից զնոսա
գիտութբ, սիրելութբ, և ճար
տարախօսութբ, ուսուցանելով
նցա խօսիլ զլեզուս համայնից, որ
պէս զի կարիցեն քարոզել ընդ ամ
աշխարհ զհաւատն սուրբ։
Եւ ՚ի նշան այսոցիկ գործոց սքան
չականաց երևեցոյց զլեզուս զայ
նսիկ հրեղէնս, քանզի լոյսն հր
րոյն այնորիկ նշանակէ զիմաստու
թն, և ջերմութն նորին նշակէ
զսիրելութն, իսկ ձևն լեզուին նշա
նակէ զճարտարախօսութն. Եւ զի
այս եղև բարեբարութն իմն մե
ծագունեղ, զոր արար Ած եկեղե
ցւոյ, վայնորիկ հռչակի տօնն այն
մեծ, որ կոչի պէնթէքօսթէս,
կամ Թէ, տօն Հոգւոյն սրբոյ։

ՊԱՐ

# ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹԻՒՆ
## իններորդի Յօդուածոյն Հաւատոյ։

Հ. Զինչ նշանակեցէ այն, որ ասի, ներ յօդուածոյ իններորդում. Թէ 'ի սուրբ կաթուղիկէ եկեղեցին. 'ի հաղորդութի սրբոց։

Պ. Աստ՝ սկսանի երկրորդ մասն Հաւատամքին. զի առաջին մասն վերաբերի առ Ած, իսկ երկրորդն առ հարսն Այ եկեղեցին։

Եւ ոպ ներ աստուծում հաւատամք զօլ զմի Ածութի, և զերիս անձինս. այսպէս ներ յեկեղեցւոյ հաւատամք, թէ իցէ մի միայն եկեղեցի։ և թէ ունիցի զերիս սկզբնաւորս բարիս. Որոց առաջինն է 'ըն հոգւոյ, որ է թողութիւն մեղաց։ և միւսն է 'ըն մարմնում, որ եղիցի յարութին մարմնոց. իսկ երրորդն է' ըն հոգւոյ և 'ըն մարմնոյ իմիասին. որ

եղէ

եղիցի կեանն յաւիտենական, որ պէս ուսուցուք ՚ըն յօդուածս հետեւեցելս ։

Մեկնեա' ինձ բառ առ բառ ըզ ա, բոլոր յօդուածս զայս ։ Եւ նախ թէ զինչ իցէ եկեղեցին ։

գրեցեալք յոլովիւք խօսիւք, իսկ
այլք եօթն սակաւիւք, և այսպէս
եօթն հրամանքն կարճագոյնք.
էին հանգէտք ըստ գրեածոյն, և
րեց հրամանաց երկրորդունեց։

Որ աղագաւ, պատուիրանքն ա-
ռաջնոյ պնակտին. են երեք։

Սակս այնր՝ զի ուսուցանեն մեզ վ-
սիրել զած. սրտիւ, լեզուաւ,
և գործով։

Որ աղագաւ, են եօթն պա-
տուիրանքն երկրորդի պնակտին։

Յաղագս այնորիկ, զի մինն ու վ-
սուցանէ մեզ առնել մերում մեր-
ձաւորի զբարի։ Իսկ այլք վեցն,
ուսուցանեն մեզ. ոչ առնել զչար
մերում մերձաւորին. նախ՝ ան-
ձին նորա. յետոյ պատուոյ նր̃, և
յետոյ ընչից նր̃, և զայս՝ ոչ գոր-
ծով. ոչ լեզուաւ, և ոչ սրտիւ։

Եկեսցուք այժմ ՚ի տեսանել ա-

զնոյնս

զնոյնս պատուիրանս։ Ուստի ինձ ու-
րեմն յառաջ՝ զայնոսիկ խօսսն,
որովք եղեն գրեցեալք ՚ի պնա-
կիտս յոյ այնոքիկ պատուիրանքն։

Վ. Խօսքն, որովք գրեցան. են
այսոքիկ. Ես եմ Տր Այ քո, որ
արտահանի զքեզ յերկրէն եգիպ-
տոսէ ՚ի տանէ ծառայութեան։

Նախ՝ Մի ունիցիս զայլ Այ ա-
ռաջի իմ։

Երկրորդ՝ Մի առնուցուս զա-
նուանն Տյ ընդունայն։

Երրորդ՝ Յիշեա՛ սրբել զտօնս։

Չորրորդ՝ Պատուեա՛ զհայր քո
և զմայր։

Հինգերորդ՝ Մի՛ սպանանիցես։

Վեցերորդ՝ Մի՛ շնայցես։

Եօթներորդ՝ Մի՛ գողանայցես։

Ութերորդ՝ Մի՛ սուտ վկայիցես
ընդդէմ քում մերձաւորին։

Իններորդ՝ Մի՛ ցանկանայցես
կնոջ այլոց։

Տասներորդ՝ Մի՛ ցանկանայցես ընչից այլոց

Զինչ կամիցին ասել խօսքն այնոքիկ, որք են յառաջ քան ըզ պատուիրանս: ա.

Այսոքիկ բանքս ընձեռեն մեզ գչորս բանս. առ՚ի ցուցանել, թէ կարէ Ա՟ծ տալ մեզ զօրէնս. և թէ մեք իցեմք պարաճանդեցելք ՚ի պահել զնոյնս: Առաջին բանն է ՚նայսմիկ խօսում, Ես եմ Տ՟ր: Վ՟զի Ա՟ծ գոլով. մեր առաջինն և գերագունեղ Տ՟ր. որ ստեղծեալ է զմեզ յոչնչէ, թարց երկբայու թէ ուրուք կարէ տալ մեզ զօրէնս իբրև սեփականաց իւրոց ծառայից: Երկրորդն է ՚նայսմիկ բառում Ա՟ծ: զի բառս այս նշանակէ մեզ. թէ Տ՟րն մեր ոչ միայն է իշխող. այլև է վեհագունեղ դատաւոր, և կառավար համայնից: Ուստի կարէ տալ զօրէնս, և պատ վ.

ժեղ զօրհնաբանացն։ Երրորդն է ՚նայամիկ բառում, Քո։ զի բաց ՚ի պարաւանդութեն, զոր ունիմք առ ՚ի հնազանդիլ այ. ոպ̃ ծառայ.ք տն. և ոպ̃ հպատակ.ք դատաւորի, ունիմք և զայլ իմն պարաւանդութի ՚ի կողմանէ դաշինն, զոր առնէ Ած ընդ մեզ ՚ըն սրբոյ մկրտութե։ քանզի ՚ի նմին առնու զմեզ Ած իւրեան իբրև զսեփականս որդիս որդեգրականս. և մեք առնումք զած, մեզ իբրև զսեփական հայր. ըստ որում և առընդունի ած զհաւատարիմս ամենայնս ՚ի յատուկ ժողովուրդ իւրեան. և հաւատարիմքն առընդունին զած ՚ի յատուկ իւրեանց Ած և Տր։ Չորրորդն՝ է ՚նայօասիկ խօսսն, որք են, Արտահանի զքեզ յերկրէն եգիպտոսի, ՚ի տանէ ծառայութե։ Վզի բաց յայնքանեաց այլոց պարաւանդութեց, է և այս՝

նոր

շնորհակալութե՛ արժանի. զի ած ազատեաց զմեզ 'ի ծառայութէ դիւաց, և մեղաց. որք եղեն նշանակեցեալք ընդ ծառայութե՛ն այն՝ եգիպտոսի, և փարաւոնի. յորմէ նոյն Աճ ազատեաց զյուդայական ժողովուրդն:

Բացայայտեա՛ ինձ այժմ զառա ա-ջին պատուիրանն:

Առաջին պատուիրանն պարու մ-նակէ զերիս մասունս: Առաջինն է, զի պարտիմք մի այ ունել զնոյն ինքն Աճ: Երկրորդն է, զի ոչ պարտիմք կալնուլ զայլ իր ինչ 'ի տեղի այ: և երրորդն է, զի ոչ պարտիմք առնել զկուռս. այսինքն, պատկերս կռածոյս, և նկարունս: որք լինիցին համարեցեալք փոխանակ աստուծոյ. այլև ոչ պարտիմք երկրպագանել այնպիսեաց կռոց:

Բացայայտեա՛ ինձ զմասն առաջինն:

Աճ կամի գոլ ընդունեցեալ 'ի ա-

մենջ

մէնջ ըստ այնմ, որ են. այսինքն, ըստ այնմ, որ է Ճշմարիտ Ած: Եւ այս՝ եղանի կիրառնլով մեր հանդէպ ա̃ծայնոյ նորին հանդի սավեհութե̃ գչորս զօրութիս, որք են Հաւատն, Յոյսն, Սիրելութեն, և Կրօնն: քանզի որ հաւատայ յա̃ծ. ընդունի զնա, ըստ որում է Ած: զի ունի զնա վս̃ գերագունեղի Ճշմարտութե̃: ընդէմ այսմիկ մեղանչեն հերեսիկոսքն: Որ յուսայ յա̃ծ. ընդունի զնա, ըստ որում է Ած. զի ունի զնա վս̃ հաւատարմագունեղի և ողորմածագունեղի, այլև կարողագունեղի: վս̃զի նկատէ 'ի նա, որ կարէ, և կամի օգնել 'ըն բնաւս իւրս ալիտոյս: ընդէմ այսմիկ մեղանչեն այնոքիկ. որք յուսահատին յողորմութե̃ն ա̃յ. կամ յուսան առաւել 'ի մարդիկս, քան յա̃ծ. կամ այնքան 'ի մարդիկս, որ

քան յա՟ծ: Որ սիրէ զա՟ծ գեր
քան զա՟մ ինչ: ընդունի զա՟ծ.
բաւորում է ա՟ծ: զի ունի զնա՛
մ՟ ծայրագունեղի բարուոյ: ըն
դէմ այսմիկ, մեղանչեն այնոքիկ,
որք սիրեն զիւրաքանչիւրս սեղ
ծուճածս, առաւել՝ քան զա՟ծ,
կամ հաւասար՝ ա՟յ: Նաւս առաւ
ել մեղանչեն այնոքիկ, որք ատեն
զա՟ծ: Իսկ որ երկրպագէ ա՟յ, գե
րագունեղիւ պատկառելութ՟ք.
ա՟պ ուսուցանէ մեզ զօրութիւնն
կրօնի. այնպիսին ընդունի զա՟ծ,
բաւաորում է Ած: զի ունի զնա՛
մ՟ առաջնոյ սկզբան, և հեղինա
կի իրաց համայնից: ընդդէմ այսմիկ
մեղանչեն այնոքիկ, որք սակաւ՝
պատկառեն ա՟յ, և յայլոց իրաց
նմա՛ սրբազնադրեցելոց. որպիսիք
են եկեղեցիք, անօթք սրբազանք,
քահանայք, և այլք նմանք սոյին
իրք. Այլև այնոքիկ, որք պատ

են զմարդիկք հաւասար՝ ա̄յ. կամ
առաւել քան զա̄ծ մեծ։

ա. Բացայայտեա՛ ինձ զերկրորդ-
մասն այսորիկ պատուիրանիս։

վ, Ի երկրորդում մասին կամի
Ա̄ծ, և հրամայէ, զի մի ունիցիմք
զիր ինչ ստեղծեցեալ փոխանակ ա̄յ
ընդէմ այսմիկ մեղանչէին ազինք
հնագոյնք, որք ո՛չ ճանաչելով ըզ
ճշմարիտ ա̄ծն. ունէին, և երկիր
պագէին փոխանակ ա̄յ զանազա
նից ստեղծուածոց. որ̄ն, արեգա
կան, կամ լուսնոյ, կամ ոմանց
մարդկանց մեռելոց։ Ընդէմ այս
միկ մեղանչեն ես դիւթք, և դիւ
թայք, և ընաւք թուանատուք, կա
խարդք, և վհուկք. որք տան դիւ
աց դժոխոյն զայն պատիւն, որ մի
այնում ա̄յ պարտի տրիլ։ Յորոց
ոմանք ունին զդևս զայնոսիկ՝ և եր
կիրպագենն ն̄ծ, իբրև իւրեանց ա̄յ.
և նոցին միջնորդութ̄բ խորհին
կա

կարողանալ զնոս ապագայս գուշակել. կամ զգանձս գտանել, կամ առ հետևել խուրեանց այլոց անպորկեշտից հաճոյից։ Նուզն դեքն են գլխաւորք Թշնամիք զարմի մարդկայնոյ. վասն որոյ նանրն յուսով պատրեն զուանոյնս այնոսիկ մարդիկս, և տան գործել նց զմեղս բազումս. իսկ 'ըն վաղճանի կորուստնեն զհոգիս նց, և բազմիցս զմարմինս ևս։

Բացայայտեա՛ ինձ զերրորդ ամասն։

'Յերրորդում մասին, պատուէ վերէ ԱԾ, զի ոչ միայն՝ զնոս յինքենէ տտեղծեցելոյս ոչ ունիցիմք փոխանակ ինչ։ այլ ևս առաւել. զի մի առնիցեմք զնոս ածս, առ'ի պաշտպանել և երկրպագանել նմա, փոխանակ ինչ։ ընդդեմ որում մեղանչէին ազինք ամենայնք, որք այնքան էին կոյրք, մինչ զի առնէին

ին զկուռս. այսինքն, արձանս յոսկւոյ կամ յարծաթոյ. կամ ՚ի փայտէ, կամ ՚ի մարմարէ, և կամ յայլոց իրաց: զորս և հաւչակապէս՝ քարոզէին գոլ ա՟ծս. մանաւանդ զի դևն դժոխոյն երբեմն մտանէր ՚ի նոսա, և խօսեցուցանէր զնոյնս կամ շարժեցուցանէր: և զն՟ո որոյ՝ տայր զոհել նց՟. և երկրպագանել Իսկ զաւուրբս մարտիրոսս, զոչ կամեցօղս առնել զնոյնս, տայէին խըս տագնապեղեւք տանջանօք սպանանել:

[illegible]. Է՛ արդեօք այլինչ՝ նայսմիկ պատուիրանում:

Վ. Այն պատուիրանի առաջին ևս Ա՟Ծ, զպատուանայես ումեմս ա հարկուս ա՟ծ այնոցիկ, որք հակառակին այսմիկ պատուիրանի: Եւ զմեծագոյնս խոստմունս ա՟ծ այնոցիկ, որք պահպանեն զնոյնն: քանզի զկնի տալոյն ըզ պատուէ

րանն

րանն, ասէ ԱԾ զխօսս զայսոսիկ ։
Ես եմ ԱԾ նախանձոտ, որ պատ
ժեմ. ոչ միայն՝ զայնոսիկ, որք ո՛չ
սիրեն զիս ։ այլ զայնոսիկ ևս, որք
իջեալք են 'ի նոցունց մինչև 'ի
չորրորդ սերունդն նց. և բարի
առնեմ այնոցիկ, որք սիրեն զիս.
մինչև 'ի հազար սերունդն նոցա ։
Ասա՛ ուշադիր, Տրն մեր վն այնր
ասէ, թէ իցէ ի՛նքն ԱԾ նախան
ձոտ, զի իմանայցեմք թէ, կարէ
պատժել զմեզ ծանրագունեղա
պէս վնզի է ԱԾ ։ և թէ կամի պատ
ժել ծանրագունեղապէս վնզի է
նախանձոտ պատուէրոյ իւրոյ, և
իրաւանց. և արդարութե ։ վնո
րոյ ո՛չ կարէ տանել զամբարշտու
թի և զանիրաւութի ։ որև է ընդդէմ այ
նոցիկ, որք մեղանչեն հանապազ՝
բայց սակայն՝ կեան խնդութե.
ոպթէ ԱԾ ո՛չինչ զայնցանէ հոգայ
ցէ ։ Բայց արդ՝ տեսանես, թէ որ
պէս

պէս Ած հոգայ զայնցանէ, զորս
ցուցանէ 'ի դէպ ժամանակի:

ա, Ընդէ՞ր Ած զայնոսիկ, որք ըզ
չար գործեն, պատժէ մինչև 'ի չոր
րորդ սերունդն նոցա: և այնոցիկ,
որք զբարի գործեն, տայ զվարձս
մինչև 'ի հազար սերունդն նոցա:

վ. Ած պատժէ մինչև 'ի չորրորդ
սերունդն, վասնզի աւելի քան զայն
ոչ կարէ ապրիլ մարդն. եթէ ոչ
մինչև 'ի տեսանել զորդիս թո
ռանց իւրոց. կամ թէ և առաւ
ել մինչև 'ի տեսանել զթոռունս
թոռանց իւրոց: Ուստի ո՛չ կամի
պատժել. եթէ ոչ զայնոսիկ ի
ջեալս, զորս նոյնինքն մեղաւորն
կարէ տեսանել: Իսկ առ'ի առ
նել զբարի, Ած ձգտի ոչ միայն 'ի
չորրորդ սերունդն. այլև մինչև
'ի հազարն, եթէ այնքան սերունդ
լինէին: քանզի Տրն մեր՝ է ա
ռաւել 'ի վարձատրելն, քան 'ի
պատ

պատժելն յօժարի. զի զվարձա
տրելն ունինա՛ 'ի բարուէ իւրմէ,
ուստի և յօժարապէս առնէ ըզ
նոյնն: Իսկ զպատժել ունի 'ի մե
ղաց մերոց, վասն որոյ և առնէ ըզ
նոյնն. իբրև թէ ուժով. այսինքն,
ստիպեցեալ 'ի մերոց չարահաճու
թեանց:

Ընդէ՞ր առաւօտին այսոքիկ ըս ա,
դաւանալիք, և խոստովանիք առաջ
նոյ պատուիրանին միայն:

Զի այս՝ է սկզբնական, և առաւէ վ.
ել հարկաւոր քան զայլս: այլև զի
է առաջին. ուստի՝ որ ինչ վասն
նորա ասի, կարէ ևս իմանել յա
ղագս այլոց:

Ըղձամ գիտել, թէ ո՞վ ոչ է ա,
ընդէմ այսմիկ պատուիրանի պա
տիւն. զոր առնեմք սրբոց, և նո
ցին նշխարաց, և պատկերաց: վ̃
զի թուէր թէ, մեք երկրպագա
նեմք համայնից այսոցիկ իրաց:
որով

որովհետև առաջի նց̃ չոքիմք 'ի ծունկս: առ որս և առնումք զաղօթս, ըստ որում առնեմք առ աստուած.

Վ, Սուրբ եկեղեցին է հարսն ա̃յ. և ունի իւրեան վարդապետ զՀոգին սբ̃: Ուստի՝ 'ի նմին ո́չք գոյ վտանգ, թէ իցէ պատրեցեալ. և ո́չ թէ առնիցէ, կամ ուսուցանիցէ առնել զիմն ինչ. որ իցէ ը̃դէմ պատուիրանացն ա̃յ: Նւ զի առ մասնաւորս գայցեմք. մեք պատուեմք և կարդամք առ սբ̃ս. իբրև առ բարեկամս ա̃յ. որք կարեն օգնել մեզ արդեամբք իւրեանց, և աղօթիւք առաջի ա̃յ: Բայց ոչ ունիմք զնոսա. փոխանակ աստուծոյ, և ոչ երկրպագանեմք նց̃, իբրև աստուծոյ: Նւ զի չոքիմք 'ի ծունկս, այս՝ ոչինչ յարաբերէ, քանզի այսպիսիք պատկառանք ոչ են յատուկք ա̃յ միայնում, զի առ

նմանին

նանին եւ նոյնպիսիքն առաջի ըս
տեղծուածոց վեհականաց. որ
գոն, Փափին. եւ ՚ըն բազում տե
ղիս կրօնաւորքն չոքին ՚ի ծունկս
առաջի իւրեանց գերագունեցն ։
Մ՜ որոյ ոչ են զարմանք, թէ առ
նիցեն առաջի սրբոց, որք ընդ Ք՜ի
թագաւորեն ՚ըն երկինս. որով
հետեւ այնպիսիք պատկառանքն
ընծեռին եւ մարդկանց ՚ըն յերկ
րիս ։

Բայց մ՜ սրբոցն նշխարաց զինչ ա-
ասասցուք. զորս թէպէտ գիտե
ցեմք, թէ զոչինչ զգան. սակայն
առաջի ն՜ց չոքեմք ՚ի ծունկս. եւ
առնեմք առ նմ՜ զաղօթս ։

Մեք առնեմք զաղօթս առ նըշ-
խարս. զորս թէեւ գիտեմք գոլ ան
զգայս, բայց մ՜ այնր պատուեմք
զսուրբս զայնոսիկ նշխարս. զի ե
ղեալք են երբեմն գործիք հոգւոյ
սբ՜ց առ ՚ի գործել զգործս բարիս
բա

բաղումն: որք և եղոյք են ՚ընդ իւրում ժամանակի մարմինք կենդանիք, և փառաւորեցեալք, որք այժմ են առ մեզ իբր գրաւք թանկագինք սիրոյն, զոր նոյնք սրբքն յարաբերեին առ մեզ և յարաբերեն: այսորիկ աղագաւ ուրեմն մեք առաջի նոցին նշխարաց առնեմք զաղօթս առ նոյնս սրբս, աղաչելով զնոսա այսոքիւք գրաւիւք մեծագնօք, զորս ՚ի նոցունց առ մեզ ունիմք, զի յիշիցեն օգնել մեզ: որպէս և մեք յիշեմք վերապատուել զյիշատակ նոցա:

Ա. Կարիցէ արդեօք ասել նմանապէս վասն պատկերաց:

Վ. Այո՛, զի պատկերք Տեառն մերոյ. Աստուածածնին, և սրբոց. ոչ են ընդունեցեալք ՚ի մէնջ իբրև զաստուածս: ուստի ոչ կարեն կոչիլ կուռք. որպէս էին կուռքն հեթանոսաց: այլ են ընդունեցեալք ՚ի մէնջ իբրև ըզ-

պատ

պատկերս, որք յիշեցուցանեն մեզ
զՏ՟րն, զա՟ծածին, և զսուրբս: և այս
պէս այնպիսի, որք ոչ գիտեն ըն
թեռնուլ. ծառայեն փոխանակ
գրեանց. քանզի 'ի պատկերաց
ուսանին բազումք զխորհուրդս
օրէնս հաւատոյն մերոյ, և զկենս,
և զմահս բազմաց սրբոց: Եւ ըզ
պատիւն, զոր առնեմք ն՟ց. ոչ առ
նեմք, զի իցեն ձևք 'ի թղթոց, կամ
'ի մատենից: և ոչ զի իցեն, գեղեց
կապէս գունաճորեցեալք և յար
մարապէս կերպաճորեցեալք: այլ
զի յարացուցանիցեն մեզ զՏ՟րն
մեր, կամ զԱծածինն, և կամ
զայլս սուրբս: Եւ զի բարւոք գի
տեմք մեք զպատկերս ոչ գոլ կեն
դանիս, և ոչ զգայունս, ուստի՝
զո՞չինչ խնդրեմք 'ի նոցանէ. այլ
առաջի նոցա, աղաչեմք զայնոսիկ,
զորս նոքին մեզ յարացուցանեն.
Ք՟ս, զՏ՟րն, զա՟ծածինն և զայլ սուրբս:

Եթէ

Ա. Եթէ նշխարքն, և պատկերքն ոչ զգան, զիա՞րդ ուրեմն առնեն զայնքան սքանչելիս առ այնոցիկ, որք յանձնեն զինքեանս նոցա՛:

Վ. Զամենայն սքանչելիս առնէ ինքն ԱԾ. բայց բազում անգամ առնէ զնոյնս վն բարեխօսութե սրբոց. և մանաւանդ՝ ամենասրբուհւոյ Մօրն: և բազմիցս առնէ զնոյնս այնոսիկ, որք յանդիման նշխարաց, և պատկերաց կարդան զսուրբս: և յայնժամ կերառնու զնշխարս և զպատկերս. իբրև ըզգործիս այնպիսեաց սքանչելեաց: առ՚ի ցուցանել մեզ. թէ ինքեան հաճոյ իմն է առաքինութեն առ սբս և առ նոցին նշխարս և պատկերս:

Ա. Ուրեմն մինչ ասի, թէ այս ոք յանձնեալ իցէ զինքն այսպիսւոյ նշխարի, կամ այսպիսւոյ պատկերի: և թէ ընկալեալ իցէ զշնորհ

ինչ

ինչ 'ի նոցունց ։ Պարտի յայնժամ իմանիլ. թէ նա յանձնեալ իցէ զինքն սրբոյն այնմիկ, որոյ է՛ նշխարն այն՝ կամ պատկերն. եւթէ ԱԾ բարեխօսութե՟ սրբոյն այնորիկ, եւ միջնորդութե՟ նորին նշխարին, կամ պատկերին. արարեալ իցէ նմա զշնորհն զայն ։

Այլ, այդպէս է ։ Ուստի յոյժ վ, հրաժարիմ, մինչ զքեզ տեսանեմ բարեպէս իմացեալ զա՟մ ինչ, զոր ցարդ ասացեալ եմ ։

Ըղձամ գիտել եւս, թէ ընդէր ա, նկարի Հայր ԱԾ, իբրեւ զծեր ոք մարդ ։ եւ Հոգին Ս՟, իբրեւ զաղաւնի. եւ հրեշտակք, իբրեւ զմանկունս հանդերձ թեւօք ։ մինչ ԱԾ, եւ հրեշտակքն իցեն ոգիք, եւ ոչ ունիցին զձեւս մարմնականս, որք կարից են արտաքարշիլ 'ի նկարչաց, ըստ որում նկարեն զմարդիկս ։

Յորժամ ԱԾ հայրն նկարի 'ի վ,

ձեւ

ծերի ուրուք մարդոյ. և Հոգին ս̃բ 'ի ձև աղաւնւոյ, և Հրեշտակք 'ի ձև մանկանց: ոչ նկարեն այնոքիկ, որք են նոյնքն ներ ինքեանս քանզի որպէս ասացեր 'ի վերոյ, են ոգիք առանց մարմնոյ. այլ նկարեն այնու ձևով, որով երբեմն երևեցեալք են: Վ̃ այնր Հայր ա̃ծ նկարի իբրև զծեր ոք մարդ, զի այնու ձևով երևեցաւ 'ըն տեսլեանն Դանիէլի մարգարէին: և Հոգին ս̃բ նկարի ձևով աղաւնւոյ, զի այնու ձևով երևեցաւ 'ի վ̃ր Ք̃ի մինչ մկրտիւր 'ի սրբոյն յօհաննու մկրտչէն: և Հրեշտակք նկարին ձևով մանկանց, զի բազում անգամ այսպէս են երևեցեալք:

Մանաւանդ՝ գիտելի է, զի շատ անգամ նկարեն իրք ոմանք առ'ի ծանուցանել մեզ. ոչ զայնս, բստ որոց իրքն այնոքիկ են ներ ինքեանս, այլ զ յատկութիւն նոցին իրաց

իրաց. կամ զարարս, զորս սովորեն առնել: Ով նկարի հաւատն, իբրեւ զկին ոմն ունող 'ի ձեռին իւրում զբաժակ կենաց: իսկ սիրելութիւն, իբրեւ զկին ոմն ունող շուրջ զինքեամբ զբազում երեխայս:

Արդ՝ հաւատն, եւ սիրելութիւն յայտ է, զի ոչ են կանայք, այլ են զօրութիւնք ոմանք ունակականք: ըստ այսմ ուրեմն կարէ ասիլ. թէ Աստ-հայրն նկարի ձեւով ծերի ուրուք մարդոյ, առ 'ի ցուցանել մեզ զնա-գոյ Հնագունեղ. եւ ինքն յաւիտենական. եւ նախկին ամենեցուն իրաց ստեղծեցելոց: Իսկ Հոգին սբ. նըկարի ձեւով աղաւնւոյ, առ 'ի նշանակել մեզ զպարգեւս անմխասութեն, մաքրութեն, եւ սրբութեան. զորս ներգործէ 'ի մեզ Հոգին սբ: Իսկ հրեշտակք նկարին իբրեւ ընմանկունս. զի են միշտ գեղեցիկք եւ ուժեղք: Նկարին թեւօք, զի են

պա…

պատրաստք առ՚ի արտաքընթանալ
յո՛ և ՍԾ Հաւատին: Եւ նկարին
զգեստուք սպիտակօք, և ուրա
րիւք ոսկեղանիւք, զի են մաքուրք,
և անձնայք, և պաշտօնեայք
հանդիսավեհութեն
տ̃ծայնոյ:

# ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹԻՒՆ
## Երկրորդի Պատուէրի
## բանին:

ա, Եկեսցուք այժմ առ երկրորդ պատուէրանն: և տեսցուք թէ, զինչ կամիցի ասել. Մի առնուցուս զանունն ա̃յ ընդ՝ ունայն:

բ, ՚Ն այսմիկ պատուէրանաւ ըն ձեռի զպատուէրս, և զանպատուութէ, որ եղանի ա̃յ խօսիւք: այս ինքն, հրամայի պատուել, և արգելանի անպատուութիւն: Որև կարէ ՚ի չորս մասունս բաժանել: զ̃ա

զի ընդ չորս եղանակս պատուի ԱԾ խօսիւք, և անպատուի։ Նախ՝ պատուի ԱԾ, մինչ անուանեմք զնա յաճախապէս վն արարից սիրելութե։ Իսկ անպատուի մինչ անուանեմք զնա յաճախապէս թարց ուրուք առաջադրութե օգտակարի։ Երկրորդ՝ պատուի, երդմամբ. և անպատուի։ երդմնահարութբ։ Երրորդ՝ պատուի, ուխտադրութբ. և անպատուի ուխտազանցութբ։ Չորրորդ պատուի, մինչ ներկարդամք զնա և գովեմք։ Իսկ անպատուի, մինչ հայհոյեմք զնա և վատաբանեմք։

Բացայայտեա ինձ զմասն առաջին։ Ա.

Անուանելն զԱծ. ոչ եւս զԱծածինն, և զսուրբս, պարզապէս՝ կարէ եղանիլ բարի, կամ վատ։ Վ.
Աղքի այնոքիկ, որք մեծապէս սիրեն զԱծ. զորև բազմիցս՝ յիշեն,

զորմէ և յաՃախակի՝ տրամաբա
նեն։ և զայս՝ առնեն մեծաւ առա
քինութե՟ և զգածմամբ. որպ տե
սանի 'ընՆաամակս սրբոյն Պօղոսի.
'Նորա յաՃախակի ընթեռնանի ա
նունն ՅԻ ՔԻ. քանզի սր՟ն Պօ
ղոս, զՔսի որպ ունէր 'ըն սրտի իւ
րում, այսպս՝ ունէր զնա 'ըն բերա
նոջ իւրում։ Բայց են և այլք ո
մանք, որք վս չարսովորութե իւրեանց
անուանեն զԱծ, կամ զսբս անուանե
մինչ են զայրացեալք. կամ մինչ
խօսին դատարկապէս, Թարց խոր
հելոյ զայնմանէ, զորմէ ասեն.
ուստի՝ մինչ ոչինչ ածէ 'ի միտս,
անուանէ զԱծ ընդվայրաբար։
Եւ այս է չարն, զի զսրբագունեղ
անուննն Այ ոչ յարգեն. առոր տաց
քեզ զօրինակ, Թէպէտ ոչ ամենև
ին հանգէտ. որպ եթէ ոք ունիցի
զհանդերձ իմն գնոյ. զոր ագանի
ցի 'նմանում տեղւոջ և ժամանա
կում

նակում, առանց նկատման ու-
րուք և խորութե։ այսպէս է և
այն՝, որ ոչ յարգէ զանուննն տ̃յ։

Բացայայտեալ ինձ այժմ զերկ ա·
րորդ մասն, որ պատշաճի առ եր-
դումն։

Երդումն ոչ այլ ինչ է, եթէ ոչ. վ·
կոչել զա̃ծ 'ի վկայութիւն ճշմար-
տութե։ որ զի լցէ բարեպէս եղեալ
պիտոյ է, զի ընկերակցեսցի ընդ
երիս իրս. այսինքն, ընդ ճշմար-
տութե, ընդ արդարութե, և ընդ
դատողութե. ո̃պ ուսուցանէ մեզ
նոյնինքն Ա̃Ծ, բերանով մարգա-
րէին Երեմիայի։ Եւ որպէս երդ-
մամբ եղելով ընդ պատեհականս
շրջահայութե, պատուի Ա̃Ծ։ զի
վկայեցեալ լինի, թէ նա է աւա-
նօղ ամենից իրաց, և է ծայրագու-
նեղապէս ճշմարտութեան, և ջա-
տագով ճշմարտութե։ Այսպէս հա-
կադարձ ո̃պս՝ անպատուի նոյնինքն
ԱԾ

Այն մեծապէս՝ մինչ եղանի երդումն թարց՝ ճշմարտութեան, կամ թարց՝ արդարութեան, կամ թարց՝ դատողութեան, զի որ այսպէս երդնու, ցուցանէ թէ կամ Այն ոչ գիտէ զիրս համայնս. կամ իցէ բարեկամ ստութեան, և անիրաւութեան: Ահա այսպիսի երդումնս է, որ կոչի երդմնահարութեան, կամ սուտերդմութիւն:

ա, Բացայայտեա ինձ առաւել մանաւորապէս, թէ զինչ իցէ, երդնուլն ընդ ճշմարտութեան:

բ. Առ՚ի ճշմարտութեան երդնուլն պէտոյ է, զի անձն որ ոչ ստորասխցէ երդմամբ զիր ինչ. եթէ ոչ զայն, զոր ինքն հաճաստապէս գիտէ գոլ ճշմարիտ. Եւ ոչ խոստանայցէ երդմամբ զիր ինչ, եթէ ոչ զայն՝ զոր ինքն ՚ի հարկէ կամի տալնուլ: Ուստի՝ են երդմնահարք, և մեղանչեն ծանրագունե

ղա

զայսպէս՝ այնոքիկ, որք ստորասեն երդմամբ զեր ինչ. զոր գիտեն գոլ սուտ. կամ գոնեա՛ ոչ գիտեն գոլ ճշմարիտ: Եւ նմանապէս այնոքիկ, որք երդմամբ խոստանան զեր ինչ. զոր ոչ ունին 'ի միտ առնուլ:

Զինչ իցէ երդնուլն ընդ արդարութեան:

Երդնուլն արդարութբ, է ոչ մխոստանալ երդմամբ առնել զեր ինչ. եթէ ոչ զայն, որ իցէ արդար, և պատեհ: Ը՟ որոյ մեղանչեն այնոքիկ ծանրապէս, որք խոստանան երդմամբ առնուլ զվրէժ անիրաւութեան ընդդէմ ինքեանց եղելոյ. կամ առնել զեր ինչ. որ իցէ անհաճոյ այ՟: Եւ ոչ պարտին պահպանել խոստմունս այնպիսիս. որք ոչ իւիք սակաւ պարտաւորեն զոք. քանզի ոչ ոք կարէ գոլ պարտաւորեցեալ 'ի գործել զչար:

մինչ

մինչ օրէնն ամ, պարահանդէ ըզ մեզ յոյզ առնել զնոյնն ։

ա. Զինչ էցէ երդնուլն ընդ դատողութեան ։

վ. Ի՛ երդնուլ խոհեմութբ և վերահասութբ. նկատելով, թէ ոչ ոչ պատշաճի կոչել զած 'ի վկայութիւն, եթէ ոչ առ իրս հարկաւորս, մեծի ներբերութեան. բազմաւ երկիւղիւ. և պատկառանաւ ։ Եւ վն այսր մեղանչէն այնոքիկ, որք վն ամենից փոքերց իրաց. մանաւանդ թէ խաղալով. և կատակելով երդնուն ։ որք այսու չար սովորութբ ներ ընթանան դիւրապէս բազում անգամ 'ի սուտ երդումն, որ մի է 'ի մեծագունից մեղաց. որք գործիլ կարեն ։ Որպէս Տրն մեր 'ըն աւետարանում, այսպէս և Սբն Յակոբոս' ըն իւրում նամակոջ հրամայէ, զի մի երդնուցուք. այսինքն, թարց հարկաւորու

տրուն, և զբան այսորիկ ընձեռեն մեզ հարքն սուրբք, ասելով. երդումն եղև գտեցեալ վն բուժելոյ զտկարութի մարդկայնոյ հաճատոյն՝ զի մարդիկք իւրերաց դժուարապէս հաճատան. վն որոյ պարտիմք կիրառնուլ զերդումն, ոչ կիրառնումք զդարմանս. որք ո՛չ առնանեն խոտակի, այլ յաճէտ անօսրակի, որքան ինչ կարելի:

Բացայայտեալ լինի զերրորդ ա. մասն պատուէրանին. որ ՚ըն ուխտադրութե կայանայ:

Ուխտն, է խոստումն իմն արա վ· րեցեալ միջ. բարուոյ ուքումն իրի, և իւրում ածայնոյ հանդիսավեհութե հաձոյի: Աստուած՝ կարես նկատել դու զերկս իրս:

Ասաի՝ զի ուխտն է խոստումն իմն. վասնորոյ առ՚ի առնել զուխտն ոչ է բաւական լոկ մտածութին, և յոյժ նուհաց՝ լոկ իղձն առնելոյ

զէրէնչ։ այլ է հարկաւոր խոս
տումն արտայայտեցեալ. բերանով
կամ գանեան սրտիւ։ Յետայսորիկ
ուշդիր լեր. զի այս՝ խոստումն ե
ղանել պարտի ոյ, որում յատկա
պէս պատկանին ուխտքն։ Իսկ
մինչ լսես ասել. Թէ լինին եւ
ուխտքն առ Ածածինն, կամ առ
սուրբս. պարտիս իմանալ. Թէ
ուխտքն այնոքիկ՝ լինին եւ սկզբնա
պէս առ Ած. բայց՝ 'ի պատիւ
Ածածնին. կամ այլոց սրբոց.
'նորս բնակի Ած ոմամբ եղանա
կաւ եզագունիւ, եւ բարձրագու
նիւ. քան 'նայլս ստեղծուածս։
ուրեմն ուխտն առ սբս արարեցել
ոչ այլինչ է, եթէ ոչ խոստումն
իմն արարեցեալ ոյ. առ 'ի պատուէ
ել զ յիշատակ սրբոցն այնոցիկ.
ընծայիւք ոմամբք։ Որ է պատուէ
ել զնոյնինքն Ած 'ըն իւրում սըր
բոյն այնմիկ։ Երրորդ՝ պարտիս
գիտել

գիտել. թէ ուխտն ոչ կարէ եղա
նիլ. եթէ ոչ. վս̃ նորաց բարեաց,
և ա̃յ հաճոյից, որպիսիք է ս̃ք կու
սութիւն, կամաւոր աղքատութի,
և նմանք սոյին։ Ուստի որ ու
նեալ է զուխտ առնելոյ զմեղ ինչ.
կամ առնելութի իմն անպատշաճ
ծառայութեն ա̃յ։ կամ թէ առ
նելոյ զբարի ինչ. վս̃ հակադրելոյ
մեծագունից բարեաց զարգելա
ոմանս։ խոստումն այնպիսի, ոչ
երբեք ելոյց է հաճոյ ա̃ծայնոյ հան
դիսավեհութե. Վ̃սորոյ ոչ պա
տիւ նմա, այլ անպատուութի է
զիցի. և որ առնէ զնոյնս, մեղանչէ
ընդդէմ այսմիկ երկրորդի պատու
իրանիս։ Ոչ մեղանչեն եւս ծան
րապէս այնոքիկ ընդդէմ այսմիկ
պատուիրանիս. որք առնեն զուխտ
և ոչ առնուն զնոյնն. որքան կան
խապէս ձեռնտուցէ նմա կատարել
զնոյնն։ Վ̃զի Ա̃Ծ հրամայէ ՚ի ն

գրու

գրուածս սրբազանս. Թէ որ առնէ զուխտ, ոչ միայն յիշեցէ կատարել զնոյնն. այլև ոչ լինիցի յամր առ՚ի կատարել զնոյնն:

ա. Բացայայտեմ ինձ զվերջին մասն. որ ընձեռէ զգովութէն ա̃յ, և զհայհոյութենէն:

վ. Հրամայէ Ած՝ ըն վերջնում մասին այսորիկ երկրորդի պատուիրանիս. զի մի հայհոյեսցի, այլ ե̃ հակառակն սորին. գովեսցի և բարեբանեսցի անունն իւր սուրբ:

Արդ՝ յաղագս պատշաճաւորութե գովութեն ա̃յ, ոչինչ գոյ մեզ դժուարութի, մինչ յայտնապէս տեսանեմք զբարիս ամենայնս գոլ յա̃յ. և մինչ տեսանեմք զամենայնս գործս ա̃յ. գոլ լի իմաստութ̃ արդարութ̃, և ողորմութ̃: բանական իմն է ուրեմն. զի ըստ ա̃մի լինիցի գովեցեալ Ած և բարեբանեցեալ. Բայց՝ յաղագս անպատ

շաճաւ

շաճաւորութե՟ն հայհոյութե՟. գի
տելի է, թէ հայհոյութիւնն ոչ
այլինչ է. եթէ ոչ անիրաւութի՟ իմն
որ խօսիւք եղանի ընդդէմ ա՟յ, առ
նոյնինքն, կամ առ սուրբս նորին:
Եւ գտանին վեց ցեղք հայհոյու
թեան: Առաջինն է, յորժամ
առընծեալի ա՟յ, իր ինչ. որ նմա ոչ
շարայարի. որգոն, թէ նա ունիցի
զեղջերս. կամ զայլս սոյնպիսիս
անպատեհութիս: Երկրորդ՝ յոր
ժամ բացասի զա՟յ իր ինչ. որ նմա
շարայարի: որգոն, կարողութի՟,
իմաստութի՟, արդարութի՟, կամ
այլք սոյնպիսիք գերազանցութի՟ք,
որ՟պ մինչ ասէ ոք, թէ Ա՟ծ ոչ կարի
ցէ առնել զայս ինչ: կամ թէ ոչ
տեսանիցէ, կամ թէ ոչ իցէ ար
դար: Երրորդն՝ յորժամ առըն
ծեալի ստեղծուածոյ ումեք, իր
ինչ. որ է յատուկ ա՟յ, որ՟պ առնեն
այնոքիկ. որք ասեն, թէ դևք գի
տեն

տեն զիրս ապադայս. կամ թէ կա
րիցեն առնել զսքանչելիս Աչմա
րեաս : Չորրորդն, յորժամ վա
տաքանի Ած. կամ Ածածինն.
կամ այլք սրբքն : Հինգերորդն՝
յորժամ անուանի անդամ իմն
Քրի. կամ սրբոց : առ՚ի այպանել
զնոյնս, եթէ ՚ընՆն լիցին եւ ա
մաչելիք, որպէս գան ՚ընՆ մեզ :
Վեցերորդն՝ յորժամ անուանին
մասունք ոմանք Քրի. կամ սրբոց
առ՚ի կատակել զնոքօք. ոմ ա
նեն այնոքիկ. որք ասեն, ընդ մօ
րուսն Քրի. կամ սրբոյն Պետրոսի
կամ այլոց սրբոց : Եւ այլք նմանք
սոցին անպատշաճք. զորս գտեալք
են ախտակալութեն դիւաց, եւ չա
րասիրութեն մարդկանց :

ա. Բաղձամ գիտել. թէ որքան մեծ
մեղ լինի հայհոյութիւնն :

բ. Է՛ այնքան մեծ մեղ. մինչեւ
թուի գոլ մեծագոյն ՚ի բնաւից :

Եւ այս՝

Իւ այս՝ կարէ ճանաչել 'ի պատժոյն, զոր արդիւնաւորի: վասնզի 'ի մէջ հնոյ կտակին. Աստուած պատուիրէր, զի հայհոյիչքն իսկոյն՝ լինիցին քարկոծեցեալք 'ի բոլորից ժողովրդոց: Այսպէս և օրէնք քաղաքականք պատժեն 'ի մահ զհայհոյիչսն: Իւ սուրբն Գրիգոր գրէ, թէ տղայ ոմն հինգամեայ՝ ուսեալ էր հայհոյել զԱստուած. և ոչ գոլով յանդիմանեցեալ 'ի հօրէն իւրմէ, մեռաւ 'ընդ գոգոյ նոյնոյ հօրն: և հոգի նորին, 'ի դիւաց. որք յայտնապէս երևեցան, եղև տարեցեալ 'ի հուրն դժոխոյն:

Արդ ոչ ընթեռնանի գոլ երբէք հանդիպեցեալ այսպիսի ինչ. վասն այլոց մեղաց. ուստի՝ է հարկաւոր վարիլ ամենայն բաղձիւ և զգուշութեամբ, 'ի բաց կալ 'ի մեծագունէ այսպիսւոյ վշտէ, աստուածայնոյ հանդիսամեհութենէ:

Այլև փախչելն 'ի մեղանէ յայսմա

նէ

նէ է դիւրագոյն իմն պատկանա-
ւորուն, որովհետև ՚ի նմանէ ոչզք
օգտութին, և ոչինչ բերկրութիւն
հաւաքի։ Ը՟որում ՚ի մեղանաց այ-
լոց լինին զգայեալք։ այլ միայն
վնասն, զոր բերէ ընդ ինքեան նոյն
մեղն։ Թէպէտ ոչ երբեք պար-
տիմք մեղանչել. Թէև կարիցեմք
ստանալ անտուստ՝ զորդիխս և
իցէ օգտութիս կամ բեր-
կրութիւնս։

## ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹԻՒՆ Երրորդի Պատուէի բանին։

ա, Իմացայ ցարդ՝ զերկուս պատուէի
բանս առաջինս։ Բաղձամ այժմ,
զի բացայայտիցես ինձ և զեր-
րորդն։

Երրորդ պատուէրանն, որ է վ՟
Վ. սրբելոյ զտօնս։ որև ըստ եղանա-
կի

կի խմբք տարբերի յայլոցն։ վասն
զի այլքն ամենեքեան թէ երկու-
նախընթացքն, եթէ եօթն հե-
տևեցելքն են բոլորովին բնականք
և պարաւանդեն, ոչ միայն՝ զքրիս-
տոնեայս։ այլև ըզյուդայեանս.
և զայլ ազգիս։ Բայց այս երրորդս
ըստ մասին է բնական. և պարա-
ւանդէ զմարդիկս ամենայնս. իսկ
ըստ մասին ոչ է բնական, և ո՛չ պա-
րաւանդէ զհամայնս։ քանզի սըր-
բել զտօնս. այսինքն, ունել զօրս
ոմանս. իբրև զսուրբս, որք պար-
տին ծախիլ 'ի գործս ս̃բս. և մա-
նաւանդ 'ի պաշտօնն ա̃ծայինն։
Եւ է հրաման բնական, վասն զի
բանն բնական ուսուցանէ զնոյն
բնաւից մարդկանց. ուստի՝ 'ըն
բոլորս մասունս աշխարհի պահ-
պանի օր իմն տօնի։ Բայց ադի
զերումն այնպիսւոյ աւուր. այս
ինքն, զի իցէ մանաւանդ մին. քան

միւսն

միւսն ։ ոչ է՛ բնական . և վ̃ այսո
րիկ . առ յուդայեանս տօնն սկըզ
բնական էր շաբաթն . իսկ առ մեզ
քրիստոնեայս է կիրակին ։

ա. Ընդէր պատուիրեաց Ած Յու
դայեանց . զի պահեսցեն զշաբաթն,
մանաւանդ քան զայլ իմն օր ։

վ, Առ այս՝ գոն երկու բանք սկըզբ
նականք ։ առաջինն է, զի ՚ըն շաբա
թոջ աւարտեաց Ած ըզ կերտու
ածն աշխարհի . վ̃ այնորիկ կամե
ցաւ, զի որբեսցեն զօրն զայն, ՚ի յի
շատակ այնորիկ մեծի բարերարու
թե̃ ստեղծելութե̃ն աշխարհի ։
Որև օգնէր առ՚ի բաց ձգել յերկ
րէ զմոլորութին ոմանց փիլիսո
փայից . որք ասացեալ էին թէ, աշ
խարհս միշտ լեալ իցէր, Վասն զի
հռչակելով ըզ տօնն ՚ի յիշատակ
ստեղծելութե̃ աշխարհի, խոստո
վանեցեալ լինիւր, թէ աշխարհս
ունեալ իցէ զսկիզբն ։ Իսկ երկ

րորդ բանն է. զի մարդիկք, մինչ
զվեց աւուրս եօթներեկին աշխա
տեցուցանեն, և վաստակեցուցա
նեն զծառայս իւրեանց. և զաղախ
նեայս, և զանասունս: կամեցաւ
Ած զի 'ըն եօթներորդումն աւ
ուր, որ է շաբաթն, հանգիցեն վե
րոյասացեալք ծառայքն և աղախ
նեայքն, այլև եզինքն և էշքն: և
զի տեարքն նոցին ուսանիցեն գոլ
գթածք հանդէպ իւրեանց աշխա
տաւորաց: և ոչ լինել խստաբա
րոյք, այլ ցաւակեցք լինել այնո
ցիկ և անասնոց:

Եթէ բանքն պահելոյ զշա ա,
բաթն իցեն այդքան վայելուչք.
ընդէր ուրեմն մեք քրիստոնեայք
ոչ պահեմք զնոյնն, որպէս պա
հեն յուդայեանքն,

Ած վասն բազմաց բանից զշա վ,
բաթն փոխարկեաց 'ի կիրակէն:
ոչ և զթլփատութին 'ի մկրտու

թն։ զփառն պսակքին 'ի սրբագործու-
նեալ սրբազնութիւնն պատարա-
գին։ և զայլս համայնս իրս բարեա-
հնոյ կտակին։ յայլս իրս բարե-
գոյնս նորոյս կտակի։ Ուստի՛
եթէ շաբաթն հուշակիւր, 'ի յի-
շատակ ստեղծելութեան աշխարհի,
զի 'ըն նմին աւուր աւարտեցաւ
գործն ստեղծելութեան։ Գերա-
զանցիւ ուրեմն բանիւ հուշակի
կիրակին 'ի յիշատակ նոյնոյ ստեղ-
ծելութեան։ որովհետև 'ըն կիրա-
կւոջ տրեալ եղև սկիզբն առաջելոյ
այնմիկ ստեղծելութեան։ և եթէ
յուդայեանքն տային մեծ զվերջին
օրն եօթներեկին։ բարեգոյն առ-
նեն քրիստոնեայքն, զի տան մեծ
զօրն առաջին։ Եւ բաց յայսմանէ,
'ըն կիրակւոջ եղանի յիշատակն
երից սկզբնականաց բարերարու-
թեանց մերոյ փրկագործութեան։ քան
զի Քս 'ըն կիրակւոջ եղև ծնե-
ցեալ

ցեալ. 'ըն կիրակուոջ յարեալ. և
'ըն կիրակուոջ առաքեաց 'ի վերայ
առաքելոց զՀոգին Սուրբ:
Յետայսց՝ ևս, շաբաթն նշանա
կէր զհանգիստն, զոր ունէին հո
գիքն սրբ՟ք 'ըն Լիմպոսում: Իսկ
կիրակին նշանակէ զփառն, զոր
այժմ ունին հոգիքն սրբ՟ք: և զկնի
ունեսցին ևս զնոյնն մարմինքն 'ըն
յերկնում: Վասն որոյ՝ յուդայ
եանքն հաչակէին զշաբաթն. զի
մինչ մեռանէին, գնային առ 'ի
հանգիստն լիմպոսին: Իսկ քրիս
տոնեայքն պարտին հաչակել զկի
րակին. զի մինչ մեռանին, ժամա
նեն 'ի փառն երանեցեալ Դրախ
տին: Յաղագս որոյ՝ ենթիմանի,
եթէ գործեալ իցեն զբարիս, հան
գէստ օրինին սրբոյ. զոր Ա՟Ծ տու
եալ է հրեանց:
Իցէ արդեօք հարկաւոր, պահել ա,
զայլս տօնս, բաց 'ի կիրակուոյն:
Է՛ հար.

պ. Է՞ հարկաւոր, պահել զայլս բա
զումս տօնս, թէ զտօնս Տ՟ն. թէ
Ածածնին, և թէ այլոց սրբոց.
այսինքն, զբնաւս զայնոսիկ. որք
են հրամայեցեալք 'ի սրբոյ եկեղե
ցւոյն: Բայց մեք աստ՝ խօսեցաք
եզականապէս զկիրակւոյն. զի նա՛
է՛ հնագոյն յայլոց, որև յաճախա
գունապէս քան զայլս ամենայնս
հռչակի. Ո՟պ և առ յուդայեանս
գոյին թէպէտ բազումք տօնք.
սակայն հնագոյնն յայլոց, և յաճա
խագոյնն, և մեծագոյնն 'ի համայ
նից, էր շաբաթն: Ուստի՝ 'ըն
տասն պատուիրանս. ոչ լինի մտա
ծուի, եթէ ոչ վասն շաբաթու,
որում ասացաք յաջորդեաց կիրա
կէն:

ա. Զինչ պիտոյ է առնել. առ'ի
պահել զտօնս:

պ. Երկու ինչք են հարկաւորք.
Առաջինն է 'ի բաց կալ 'ի գործոց
ծա

ծառայականաց. որք են այնոքիկ, զորս սովորեն առնել. մշակք, և արհեստաւորք, որք ոչ աշխատին եթէ ոչ մարմնով: զի գործքն այնոքիկ, նորա ներգործէ սկզբնապէս միտն, ոչ կարեն կոչիլ ծառայականք: Թէև նպաստաւորութ̃ե մտին արտագործիցեն ևս լեզուն, կամ ձեռն, կամ այլ անդամ ինչ մարմնական: Երկրորդն է, որ 'ըն տօնս հրամայեցեալս եմք պարաճանդեցելք գտանիլ ներկայք առ սր̃բ սրբազնագործութ̃ին պատարագին: Եւ թէպէտ սր̃բ եկեղեցին ոչ պարաճանդէ զմեզ առ այլինչ: Սակայն՝ յոյժ յարաբերի, զի բոլոր օրն տօնին, կամ թէ ըստ ուրուք մասնին նորին. ծախիցի յաղօթս, և յընթերցմունս հոգեկանս. և 'ի գնալն յեկեղեցիս, և 'ի լսելն զքարոզս, և 'ի գործել զայլս նմանս սոցին կրթութեանս սուրբս:

սուրբս: որովհետեւ այս՝ վաղ Ջանն, յաղագս որոյ տօնքն են կացուցեալք:

ա, Եթէ ՚ըն տօնս ո՛չ կարեն առնել գործք ծառայականք. ուրեմն և ո՛չ կարիցեն հնչեցուցանել զան կակք, ոչ պատրաստել սեղանք, եւս առաւել ո՛չ եփիցեն կերա կուրք: զի այսոքիկ ամենեքեան են գործք ծառայականք:

բ. Պատուհիրանն ոչ առնելոյ ըզ գործ ծառայական իմանի երկո քումբք նպաստաւորութ̃բք: Նախ՝ զի ո՛չ իցեն հարկաւորք մարդկայնոյ կենցաղաւորութե. վ̃ն այսորիկ անխայի եփելն, պատ րաստելն զսեղանն, և առնել զայլս իրս. որք ոչ կարեն ՚ըն նախընթա ցումն առնիլ աճուր: Երկրորդ՝ զի ո՛չ իցեն հարկաւորք ծառայու թեն ա̃յ: և վասն այսորիկ, շնորհի հնչելն զանկակին. և առնել զայլս

ծա

ծառայականութեանս ՚ն եկեղեցւոյ. որք ոչ կարեն առնել ՚նայլ աւուրս: Եւ բաց յայսցանեաց նպաստաւորութեց: է եւս պատեհական, առնել զգործս ծառայականս ՚նաւուրս տօնից. մինչ վ̃ բանականի ուրուք պատճառ աւ լինի հրաման յառաջնորդէն:

# ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## Չորրորդի Պատուէրի բանին:

Հետեւի չորրորդ Պատուիրանն, ա· որ է վասն պատուելոյ զհայր, և զմայր: Եւ ըղձամ գիտել. թէ ընդէր պատուիրանքն երկրորդի պնակտին սկսանիցեն ՚ի պատուելոյ զհայր և զմայր:

Պատուիրանքն երկրորդի պը վ, նակտին պատշաճին առ մերձաւ որս

որս ։ ոչ որք առաջնոյ պնակտին պատշաճին առ Այծ ։ Եւզի 'ի մէջ մերձաւորաց ամենից առաջնագոյնք, և որոց առաւել իցեմք պարաւանդեցելք, են հայրն և մայրն յորոց ունիմք զգոյն, և զկեանն, որ է հիմն բնաւից բարեաց ժամանակաւորաց ։ վասնորոյ ըստ յոլովից բանից սկսանի երկրորդ պնակտին 'ի պատուելոյ զհայր և զմայր ։

ա. Ինչ էր իմացեալ լինի այսու պատուով. զոր պարտիմք առնել հօր և մօրն ։

բ. Երեք իրք այսու պատուով իմանին. որք են ձեռնտուութիւն, հնազանդութիւն, և պատկառանս, զի նախ՝ եմք պարաւանդեցեալք առ 'ի օգնել և ձեռնտուք լինել հօր մերում և մօր, 'ըստ հարկաւորութեան նոցին ։ Եւ այս՝ ձեռնտուութիւն կոչի 'ի գրուածոց սըրբոց պատիւ ։ և է յոյժ բանական

իմն

իմն, զի որդիք, որք ընկալեալք
են զկեանս ՚ի հօրէ և ՚ի մօրէ իւ
րեանց. Նախահոգայցեն յարա
պահել նոյն կեանն ՚ի նոսա: Երկ
րորդ՝ եմք պարաճանդեցեալք առ
՚ի հնազանդել հօր և մօր մերում,
որպէս ասէ ս՟բն Պօղոս, ըստ ա՟մե
՚ի Տ՟ր: ֆ՟, ՚ըն էլս ամենայնս. որք
լիցին հանդէպք կամաց Տ՟ն: քան
զի յորժամ հայր և մայրն հրամայ
են մեզ զիր ինչ. որիցէ հակառակ
կամացն ա՟յ: յայնժամ ըստ Պ՟ե
պատուիրանին, պիտոյ է առնել ըզ
հայր և զմայր. այսինքն, ո՛չ հնա
զանդել ն՟ց: և ո՛չ անսալ ն՟ց. որպէս
Թէ լեալք իցեն մեզ Թշնամիք:
Երրորդ եմք պարաճանդեցեալք,
առ ՚ի առնել զպատկառանս հօր
մերում և մօր: տանելով նոցա ըզ
նկատս, և մեծարելով զնոսա խօ
սիւք, և այլովք առիւք արտաքնօք,
ո՟մ պատշաճի ն՟ց: Եւ Թէ որքա

նճոյ

նւոյ մեծի դիպուածոյ համարէր զնոյնս ԱԾ, յայտ է 'ի պատժոյն, զոր 'ըն հնոյ կտակում կացուցանէ, քանզի պատուէրէ սպանանել զայնոսիկ. որք յանդգնին անիծանել զհայր, կամ զմայր:

Վ. Ո՛չ գիտեմ, ընդէ՞ր օրէնն ա̃յ պատուէրէ որդւոց, զի օգնիցեն, և ձեռնտայցեն հօր և մօրն: և ոչ պատուէրէ ևս հօր և մօրն, զի օգնիցեն, և ձեռնտայցեն որդւոց: մանաւանդ՝ մինչ տակաւին իցեն փոքերք, և ունիցին զպիտոյս օգնութեան:

Ա. Ճշմարտապէ՛ս ասեմ, պարտաւանդութիւն է անդրադարձական: 'ի մէջ հարց, և որդւոց, զի ո̃պ այսոքիկ են պարտաւանդեցեալք առ 'ի սատարել. և օգնել, և հնազանդել ն̃ց: նոյնպէս այնոքիկ, են պարտաւանդեցեալք առ 'ի նախադիտել ն̃ց, ո՛չ միայն զկերակուրս և

զհան

զհանդերձս, այլև զհրաճուանս, և զուսմունս նոցա հոգալ:

Իսկ սէր հօրն առ որդիս այնքան է բնական, և կարգաւոր, մինչ զի օրինի ումեք այլում գրեցելոյ ոչ պիտանաւորի, զի հարքն յիշեցեն զպարաւանդութիւնն իւրեանց առ որդիս: Բայց՝ որդիքն հակադարձաբար՝ յաճախակի՝ տեսանին, ոչ բարուք՝ պատասխանել սիրոյ ծնողաց իւրեանց: Վա̃ որոյ հարկաւորեցաւ, ազդել նց̃ զպարաւանդութի̃ն իւրեանց այսու պատուիրանաւ: Եւ ոչ միայն բաւականացաւ Ա̃Ծ լոկիւ այսու պատուիրանաւ: այլ առադրեաց ևս նմա զխոստումն իմն, և զսպառնալիս, առ՚ի պահպանել զնոյն պատուիրանն:

Ըղձամ գիտել զխոստումն զայն, ա, և զսպառնալիս:

Այսմիկ չորրորդի պատուիրա Վ.

նի

նի առադրեաց Աճ զխօսս զայսո-
սիկ: Զի կեայցես երկարապէս
՚ի վ͞ր երկրի: կամելով ասել. Թէ
այնոքիկ, որք պատուիցեն զհայր
և զմայր: ունեսցին վ͞ն վարձու,
զկեալն երկարապէս: և այնոքիկ,
որք ո՛չ պատուիցեն. ունեսցին ՚ի
մէջ այլոց պատժոց: և զո՛չ կեալն
երկարապէս: Որ է պատիժ յոյժ
հանդիտաւորեցեալ: զի ո՛չ է բա-
նական իմն, Թէ հրճուիցի այն՝
երկարակեցութ͞բ. որ անպատուի-
ցէ զայնոսիկ, յորոց առընկալեալ
է զնոյն կեանն:

ա. Աստ՝ առաջիկայի ինձ հարցանել:
Թէ զոր ինչ ասացեր վասն հօր և
մօրն, իմանին և վ͞ն այլոց վերա-
կացուաց. որք ՚ի դէմս մեր ունին
կալեալ զտեղի հարց:

բ. Յոյժ բարւոք՝ խորհեցար.
քանզի այս՝ պատուիրան, տարա-
ծի առ ամենայնս գերագոյնս, Թէ

եկե

եկեղեցականս, Թէ մարմնականս ։

# ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## Հինգերորդի Պատուէ րանին ։

Բացայայտեա՛ ինձ այժմ զհինգ ա, երորդ պատուէրանն ։

Այս պատուէրան արգելու վ, նախ և յառաջ՝ զմարդասպանութիւն ։ զի ասէ, Թէ Մի սպանանիցես ։ քանզի սպանանել զայլս կենդանիս այսու պատուէրանաւ ոչ լինի արգելեցեալ ։ Իսկ բան է սորին, զի այլք կենդանիք են ստեղծեցեալք վս մարդոյն ։ վս այսր՝ մինչ մարդն բարձոք կերանու զմահ այնոցիկ կենդանեաց . կարէ սպանանել զնոսա ։ Բայց՝ մարդն ոչ է ստեղծեցեալ վս այլոյ մարդոյ . այլ վս այ ։ Եղի մարդն ոչ է Տր կենաց այլոց մարդկանց,

ուստի՝ ոչ է նմա պատկան սպանա
նել զմարդն :
ա, Բայց տեսանեմք, զի իշխանք,
և քաղաքապետք մեռուցանեն
զաւազակս և զայլս չարագործս :
որք են մարդիկք : և սակայն ոչ
համարին առնել զչար, այլ ըզ
բարիս :
բ, Իշխանք և քաղաքապետք, որք
հրապարակաւ հեղինակութե՟ մե
ռուցանեն զչարագործս . ոչ իբ
րև տեարք կենաց նոցունց, այլ
իբրև պաշտօնեայք ա՟յ . որ՟պ ասէ
Ս՟բն Պօղոս : քանզի Ա՟Ծ կամի,
և հրամայէ, զի պատժեսցին չարա
գործքն : և մինչ արդիւնանան ըզ
մահ, սպանիցին : զի մարդիկք բա
րեգործք լինիցին ապահովք, և
կեայցեն խաղաղութեամբ :
Վա՟ այսորիկ նոյն ինքն Ա՟Ծ, տու
եալ է իշխանաց և քաղաքապե
տաց զսուսեր 'ի ձեռս առ 'ի առնել
զար

զարդարութիւն, Ջատագովելով զբարեգործս և նուաճելով զչարագործս: Ուստի՝ յորժամ՝ հը րապարակաւ հեղինակութեամբ մեռուցանէ զչարարարս, ոչ կոչի մարդասպանութիւն, այլ արդարութեան իշխանին: Եւ մինչ պատուիրանն այլ ասէ, Մի սպանանիցես: իմանի, յատկաւ քոյով հեղինակութբ մի սպանանիցես:

Ինչ տարակոյս իշխն ադիպլի: ա.
մինթէ այս՝ պատուիրան արգելուցու եւ սպանանել ինքն զինքն, թէ ո՛չ: որպէս արգելու սպանանել զայլս:

Թարց տարակուսի ումեք, այս բ.
պատուիրան արգելու եւ սպանանել ինքն զինքն: զի ո՛չոք է տէր կենի իւրոյ յատկի: զի մարդն ո՛չ է արարեցեալ վն իւրեան ինքեան այլ վն այլ: ուստի՝ ո՛չ կարէ ոք իւրով յատկաւ հեղինակութեամբ

բառ

բառնալ յինքենէ զկեանն։ Եւ եթէ սրբք, կամ սրբուհիք ոմանք վասն ոչ կորուսանելոյ զհաւատն, կամ զողջախոհութիւնն, սպանեալք իցեն զինքեանս։ Պարտիս խորհել, թէ ունեալք են նոքա զառանձնական և յայտնի իմն ներշնչութիւն յԱյ. առ՚ի առնել զնոյնն։ ապա թէ ոչ, արտաբասռել զինքեանս ոչ կարէին յայտապխաճոյ մեղանէ ծանրագունեղէ։ քանզի որ սպանանէ զինքն. սպանանէ զոմն մարդ, ուրեմն առնէ զմարդասպանութիւն, որ է մեղ իմն արգելեցեալ մանաւանդապէս նայամիկ հինգերորդում հրամանի օրինաց։

ա. Ա̃էր ասես մանաւանդապէս։

վ. Ա̃նզի ոչ միայն է արգելեցեալ սպանանելն։ այլև արգելեցեալք ևս են, վիրաւորելն, ճաղելն, և այլք այսպիսիք անիրաւութիւնք

ընդէմ կենաց և անձանց մերձաւո
րաց ։ Այլև Քս̃ Տէրն մեր 'ի
սրբում աւետարանին, բացայայ
տելով զայս պատուէրան. արգե
լու համանգամայն զբարկութիւն,
զատելութիւն, զոխակալութիւն, զա
նարգանս և զայլս նմանս սոցին ա
րարս, կամ խօսս. որք սովորեն
լինել պատճառք, և արմատք սպա
նութեան ։ և 'ընդ հակառակն, կա
մի նոյն Տէրն մեր, զի լիցուք հեզք,
և բարերարոյք, նախահոգալով
զխաղաղութիւն, և զհամա
ձայնութիւն ընդ ա
մենեսեան ։

## ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹԻՒՆ
### Վեցերորդի Պատուէր
### անին ։

Զինչ պարունակէ վեցերորդ ա
պատուէրանն ։

Պ. Սախկնապէս պարունակէ զար
գելումն շնութե. որ է մեղանչել
ընդ կնոջ այլոյ: Եւ զի զկնի կե
նաց, առաւել վարկեցեալ ինչ է
պատիւն: Վս որոյ յետ պատուի
րանին ոչ սպանանելոյ, արգելե
ցեալ լինի մեզ շնութին, ընդ որ
կորնչի պատիւն:

Ա. Վեր ասես նախկնապէս:

Պ. Զի տասն պատուիրանքն գոլով
օրէն արդարութե, նախկնապէս
արգելուն զմեղս զայնոսիկ, որովք
յայտնագունապէս արտագործի
անարդարութին: Բայց սակայն
արգելանին և երկրորդապէս,
այլք ամենայնք ցեղքն մեղաց մսե
ղինաց. որպիսիք են, սրբաղնա
ղանցութին. որ է մեղանչել ընդ
անձին ումեք սրբաղնագրեցելում
ոյ: ազգապղծութին, որ է մե
ղանչել, ը ազգականի ումեք: կու
սապղծութին, որ է մեղանչել
ընդ

ընդ կուսի ումեք։ Պոռնկութիւն,
որ է մեղանչել ընդ կնոջ ումեք եղ
ծեցելոյ․ և աղատի, որպիսիք են
այրիք, և բոզք։ և այլք այսպիսիք
ցեղք մեղաց զազրագունից, որք
ևոչ պարտին անուանիլ 'ի մէջ
քրիստոնէից։

Թէպէտ հաւատամ զքեզ, զոր ա-
սացեր գոլ Ճշմարիտ։ սակայն՝
բաղձամ իմանալ․ ուր գուցէ հիմ
նեցեալ․ թէ պոռնկութիւն իցէ
մեղ․ զի ոչ թուի, թէ առնիցէ
վնաս ինչ․ կամ անիրաւութիւն
ընդդէմ ումեք, որ շարագործիցէ
զլուկ պոռնկութի։

Գոյ հիմնեցեալ 'նամենայնս օ- Վ.
րէնս։ 'Նօրինում բնութե, 'նօ
րինում գրեցելում, և 'նօրինում
շնորհաց։ զի 'նօրինում բնութե
գտանի, թէ Պատրիարքն Յու-
դա կամեցաւ մեռուցանել զայրի
ոմն կին, կոչեցեալ Թամար, որ

էր-

էր հարսն իւր. որև գողով յայնժամ
այրի, եղև գտեցեալ յղի։ Ուստի
երևի, թէ 'ի ժամանակին այն
միկ, յառաջ քանթէ տրեալ էր
օրէնն մօւսէսի, ներխայթիւ բնու
թե ճանաչէին մարդիկք զպտուն
կութին գոլ մեղ։ Յետ որոյ օրէնն
Մօւսէսի 'ի բազում տեղիս առ
գելու զպտունկութին։ Եւ 'ի
նամակս Առբոյն Պօղոսի բազմիցս
ընթեռնումք, թէ պոռնիկք ոչ
մտցեն 'ի փառս դրախտին։ Եւ ո՛չ
ևս է ճշմարիտ, թէ պոռնկութին
ոչ առնիցէ զմիաս և զանիրաւու
թին լինչ ումէք։ քանզի առնէ ըզ
միաս իւրեան կնոջ. որ է՛ն այսո
րիկ մնայ վատահամբաւ։ առնէ
զմիաս զանձակաց. որք ծնանին ան
օրինաւորք, առնէ զանիրաւուն
ընդէմ Քի, զի գողով, մէք ամենե
քեան անդամք Քի։ ուստի եթէ
ոք շարագործէ զպոռնկութիւն.

տունէ, զի անդամն Քն լինիցի, անդամ բոզի։ Եւ յետ այսց տունէ զանիրաւութին ընդդէմ Հոգւոյն սրբոյ. քանզի մարմինք մեր են տաճարք Հոգւոյն սրբոյ. ուստի եթէ ոք պղծիցէ զմարմին իւր պոռնկութբ, անյարգէ զտաճար Հոգւոյն Սրբոյ։

Չորրորդ պատուիրանս այս՝ ա-բաց 'ի մեղացն. զորս ասացեր, որ գելու արգելոք զայլս մեղս։

Արգելու ես զայլս ամենայնս վ-տաս անպարկեշտս. որք են, երբ Ճանապարհք առ շնութին, կամ առ պոռնկութին. այսինքն, հայեցմունքն վաւաշոտք, և համբոյրք լրփականք, և այլք սոյին նմանք։ զի այսպէս ուսոյց մեզ Տրն մեր 'ըն իւրում աւետարանոջ. ուր բացայայտելով զայս վեցերորդ պատուիրան. ասէ, եթէ ոք հայեցի 'ի կին, առ 'ի ցանկանալ. ան

դէն

դէն շարագործեաց զշնուԹն 'ըն Հոգւոյ իւրում: Ամ այսօրէն, է հարկաւոր այնմիկ, որ կամի փախչիլ 'ի պարտաւորուԹենէ այսպիսեաց մեղաց. ունել զհոգ մեծ վն իւրոց զգայուԹեց ։ և մանաւանդ աչացն, որք են իբր դրունք, 'ընդ որս մտանէ մահն հոգւոյն ։

## ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹԻՒՆ

### Եօթներորդի Պատուիրանին ։

ա. Զինչ պարունակէ եօթներորդ պատուիրանն ։

բ, Պարունակէ զարգելումն գողութեան, այսինքն. զառնուլն ինչս այլոց, ընդ կամաց տեառցն ։ Եւ բարեաւ իմիք կարգաւ արգելանի արդ՝ գողանալն. յետորոյ եղեն արգելեցեալք մարդասպանու

նութ̃ն, և շնութ̃ն. զի 'ի մէջ
բարեաց այսորիկ աշխարհի, զկնի
կենաց վարկանի պատիւն, և յետ
պատուոյն վարկանին ինչքն։

Քանեօք եղանակօք ընդդէմ ա,
եօթներորդի այսմիկ պատուիրա֊
նի արտագործի։

Երկօքումբք եղանակօք սկըզբ֊
նականօք, առ որս վերածին այլքն
համայնք։ Առաջին եղանակ ըս֊
կզբնական, է բառնալ զինչս այ֊
լոց գաղտաբար։ և այս՝ յատկա֊
պէս կոչի գողութ̃ի։ Երկրորդ
եղանակ սկզբնական, է բառնալ
զինչս այլոց յայտնապէս։ որպ̃ յա֊
փշտակեն աւազակքն ճանապար֊
հաց։ և այս՝ կոչի յափշտակութ̃ի։
Եւ թէպէտ պատուիրանն խօսի
ցի զառաջնոյն. ասելով, Մի գո֊
ղանայցես։ Սակայն իմանի ևս
զերկրորդէն, զի որ արգելու ըզ֊
չարն փոքրագոյն. արգելու ևս

Թարց

Թարց երկրայութեան իմիք, և ըղ-
ձարն մեծագոյն ։

ա. Որք լցեն մեղք այնոքիկ, որք
վերաբերին, առ գողութին, և
առ յափշտակութիւնն, և են որ
գեղեցեալք յայսմանէ պատուէ-
րանէ ։

բ. Են այսոքիկ, նախ համայնք
զրկանք, և խաբէութիւնք, որք լի-
նին, 'ի ծախելն և 'ի գնելն, և
*նայլս նոյնին նմանս գաշնակցու-
թիւն ։ Եւ այս՝ վերաբերի առ գո-
ղութին, զի որ առնէ զայնպի-
սիս զրկանս, գաղտապէս առնու
'ի մերձաւորէն աւելի քան, զոր
պարտի ինքեան մերձաւորն իւր ։
Երկրորդ՝ համայնք տոկոսք, որք
լինին, փոխատրելով զփողս այնու-
պայմանաւ. զի աւելորդաւ այոքա-
նեաւ հատուցանիցեն ։ Եւ այս՝
վերաբերի առ յափշտակութին ։
զի որ առնէ զտոկոս, յայտնապէս
պա

պատահանիցէ առաւել քան զայն, զոր տուեալ է։ Երրորդ՝ բնաւք վնասքն, որք լինին տրեցեալք մեր ծառորին։ Թէեւ որ առնէ զվնասն, զոչինչ 'ի նմանէ շահեցի։ ոչ մինչ կեղեցէ ո՛ք զտուգանս այլոց։ Եւ այս վերածի երբեմն առ գողութին, եւ երբեմն առ յափշտակութին։ ըստ գաղտաբար, եւ ըստ յայտնապէս առնելոյն զնոյնն։ Չորրորդ որ ոչ հատուցանէ զայն. վս որոյ է պարաւանդեցեալ 'ի հատուցանել։ այնպիսեն մեղանչէ ընդդէմ նոյնում պատուիրանիս, ոպթէ էցէ գողացեալ զնոյնն։ քանզի յարակայնու առնինքն զինչս այլոց. հակառակ կամաց տեարցն։

Հինգերորդ՝ մեղանչէ ընդդէմ նոյնում պատուիրանիս, եւ առնէ զգողութի, որ գտանէ զիր ինչ, զոր այլոք էցէ կորուսեալ. եւ յարտ պահէ զնոյնն առ ինքն։ Ասեմ, Թէ

թէ այլոք իցէ կորուսեալ։ վս զի
ոչ է մեզ կալնուլ զիր ինչ առինքն,
զոր ոչոք իցէ կորուսեալ. որպէս
երբեմն գտանին ՚ըն ծովեզերս ա
կունք։ Վեցերորդ՝ յարաբերի
առ գողութին, կամառ յափշտա
կուին յատկացուցանելն ինքեան
զիրս հասարակս։ զի որք իւրացու
ցանեն զիրս հասարակաց, զըր
կեն զընկերս ՚ի վայելմանէ իրացն
այնոցիկ, որք առ նոսա պատշա
ճին։

ա Ըղձամ գիտել. եթէ գողու
թիւնն իցէ մեծ մեղ։

պ. Մեղք մահացուք ամենեքեան
կարեն կոչիլ մեծք, որովհետեւ
զրկեն զմարդն ՚ի կենաց յաւիտե
նականաց։ Իսկ գողութին ունի
զայս ինքեան յատուկ, զի ներա
ծէ զգողն ՚ի մեծագունեղս չարս։
ոպ տեսանեմք, զՅուդաս, որ վս
չարսովորութեն, զոր ունէր ՚ի
գողա

գողանալ. Իւրացուցանէր զայնս,
որք նմա լինէին տրեցեալք առ՚ի
հասարակ կիրառութ՟ի Տ՟ն, և
սրբոց Առաքելոց առածեցաւ ՚ըն
վերջնում, ՚ի մատնել զսրբագու
նեղ վարդապետն իւր: Այլ և հա
նապազ տեսանեմք, զի յափշ
տակողքն եղերեն զինքեանս առ
՚ի սպանանել զմարդիկս, զորս ոչ
են երբէք տեսեալք և ընդ որս ոչ
զատելութ՟ի և ոչ զթշնամութ՟ի
ինչ ունէին, այլ միայն վ՟ս ըղձի գօ
ղանալոյ զինչս նոցին սակաւս,
զորս տանէին ընդ ինքեանս: Իսկ
Ա՟ծ թոյլ տայ նոցա: զի որք խլեն
զինչս այլոց, սակաւ ինչ հրճուէիլ
կարիցեն նոքօք: որպէս Յուդաս
ինքն զինքն կախեաց, և խեղ
դեցաւ: Իսկ աւազակքն
ըստ մեծի մասին ան
կանէին ՚ի ձեռն ար
դարութեան:

ՊԱՐ

# ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹԻՒՆ
## Ութերորդի Պատուի րանին։

ա. Զինչ պարունակէ Ութերորդ Պատուիրանն։

վ. Յարդ` ասացաւ վն անիրաւու թեց. որք լինին գործովք ընդդէմ մերձաւորին։ այժմ հետևէին ա նիրաւութիւնքն, որք լինին խօ սիւք։ Ա՞ որոյ ութերորդ պա տուիրանն արգելու զսուտ վկայու թին։ որ է մանաւանդագունեղ անիրաւութիւն 'ի մէջ այնոցիկ, որք լինին խօսիւք։

ա. Կամիմ գիտել, թէ մինչ ոք ասի ցէ զսուտ իմն, թայց` ոչ ումեք մնասելոյ։ առնիցէ արդեօք ըէմ այսմիկ պատուիրանի։

վ. Երկուք եղանակօք սովորէ լինել ստասացութին։ Նախ` կամելով առնել զմնաս իմն մերձաւորին և քում։

րում: որպէս յորժամ առաջին դա
տաւորին վկայէ ոք զայլմէ, թէ
լցէ գողացեալ. կամ սպանեալ:
գիտելով ո՛չ գոլ ճշմարիտ, զոր
ասէն: և այս՝ կոչի զո՛ւր, վնասա
կար, և մահաբեր: Երկրորդ՝ օգ
նելով մերձաւորին իւրում, ո՛չ
մինչ ոք ասէ զսուտ, վասն փրկելոյ
զայլ ոք 'ի վտանգէ ումեքէ: և այս
կոչի սուտ պաշտօնաւոր: Երրորդ
ոչ վնասելով, և ո՛չ օգնելով. և այս
կոչի սո՛ւտ դատարկ: Առաջինն այ
սոցիկ եղանակաց է՛ յատկապէս՝
արգելեցեալ այսու պատուիրա
նաւ, զի նա՛ է վկայութի ո՛չ միայն
սուտ, այլև անիրաւ: և ծանրա
գունեղ մեղ: Իսկ այլ.ք երկոքեան
եղանակքն թէպէտ՝ ո՛չ պարունա
կեցեն զանիրաւութի, և ոչ իցեն
մեղ.ք այնքան ծանունք, որքան ա
ռաջինն: սակայն են ճշմարտապէս
մեղ.ք, գոնեա՛ ներելիք: քանզի ոչ

երբէք

երբէք կարէ առնել սուտ ինչ, վ̃
ոյր և իցէ երբ, աշխարհիս։

ա, Պարունակիցէ արդեօք այս՝ հրաման զայլ ինչ. բաց յարգելմանէ ստոյն։

վ. Պարունակէ զարգելմունս և րից այլոց ցեղից մեղաց։ որք գործին լեզուաւ. և ըստ իմիք եղանակի յարաբերին առ սուտ վկայութին։ որք են այսոքիկ։ քամահանք, բանբասանք, և անէծք։

ա. Զինչ իցէ քամահանն։

Քամահութիւն է խօս իմն անիրաւական. որ առէ վասն անպատուելոյ զմերձաւորն։ որպէս մինչ ասի զումեքէ, թէ իցէ տգէտ, սակաւախել, գուեհիկ, վատահամբաւ. և այլք սոցին նմանք։ Եւ թէ այսոքիկ իցեն մեծք մեղք, մինչ այնու սրտիւ ասին, զի առնիցեն զանիրաւութին։ ցուցանէ զնոյնս կեցուցիչն մեր ՚ըն սրբոյ աւետարանում,

նում, ուր ասէ, եթէ ոք ասիցէ մերձաւորին իւրում անխել. եղիցի արժանի հրոյն դժոխոյ, և ասացի, թէ մինչ այնու սրտիւ ասին, զի առնիցեն զանիրաւութի. քանզի յերբ ասի՝ ընդ կատակ, կամ վա̃ խրատու, և յանդիմանելոյ. որպէս երբեմն առնեն հարք ընդ որդիս, կամ վարդապետք ը̃ դեռավարժս թարց խոկման արհամարհանաց: և յայնժամ ոչ կոչի քամահումն, և ոչ է մեղ. եթէ ոչ թերևս ներելի:

Զինչ իցէ բանբասանն: Ա.

Բանբասանն է՛ բառնալ զբարի համբաւն մերձաւորին ասելով ըզչար ինչ զնմանէ: և այս լինի, կամ զչար ինչ ստապէս ասելով զմերձաւորէն, կամ վիպելով զճշմարիտ չարն և զծածուկն. առ՚ի կորուսանել զբարի համբաւն մերձաւորին. զոր ունէր առ նոսա, Վ.

որմ

որք ո՛չ գիտէին զմեղս նորին ։ Այս բանբասան, է չար իմն յաճախագոյն 'ի մէջ մարդկան, և մեծագոյն, և վտանգաւոր. քանզի համբաւն է՛ առաւել ներբերող քան զինչս ։ և յոմանց է վարկեցեալ առաւել քան զկեանս ։ Ա՜ որոյ է մեծ չար իմն կորուսանել զնոյնն ։ Այլև այլոց չարեաց դիւրին է գտանել զբժշկութիւն, բայց զհամբաւն կորուսեցեալ ծայրագունե ղին դժուարութ՟ հազիւ կարեմք ստանալ ։ բայց սակայն այն, որ իւրովք բանբասանօք բարձեալ է զնոյնն 'ի նմանէ, պարտաւանդեցեալ է՛ առ'ի վերակազդուրել զնոյնն ։ ուստի՛ օգտագունեղ իրրաւ է, միշտ ասել զբարի զամենեցունց. երբ կարէ ասել ճշմարտութ՟ ։ և երբ ոչ կարէ ասել. յայնժամ կալ լռութ՟ ։

ա. Զ ինչ իցէ անէծն ։

Անէծնէ, մինչ ոք վատաբանէ զ-
զմերձաւորէն իւրմէ, ասելով. անի
ծեցեալ լինիցի: կամ թէ, յղէ
առնա զզանազանս ցեղս չարաբա
նութեց. ասելով, դիպեսցին քեզ
այսպիսիք, կամ այնպիսիք չարիք:
և այս՝ անիծանելու է մեղ իմն ծան
րագունեղ. յերբ լինի ասելուն,
և բաղձանով. զի չարիքն այնորիկ
՚ի հարկէ դիպիցին մերձաւորին:
Իսկ երբ եղանի թարց ասելու
թե, և առանց վատի բաղձանի,
ընդ կատակ. կամ ընդ թեթևու
թի, կամ ընդ անկարծ բարկու
թի իմն, առանց ումեք ուշադրու
թե առայն՝ որ ասի, է նուաղ իմն
չար: Բայց վասն այնորիկ է մեծա
չար, զի ՚ի բերանոյ քրիստոնեի ու
րուք, որ է ուղղեգրութե ուղղի
ոյ. ոչ պարտի ելանել, եթէ
ոչ բարերարութե. և օր
հնութե:

# ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹԻՒՆ Իններորդի Պատուի-
# րանին ։

Աշ. Զինչ պարունակիցէ իններորդ
պատուիրանն ։

Վ. Պարունակէ զարգելուածս ցան
կութեան ունելոյ առ կինն մեր
ձաւորին ։ զի թէպէտ 'ըն վեցերոր
դումն պատուիրանին արգելեցել
եղև շնութիւն, սակայն կամեցաւ
Ած առանձնապէս արգելուլ ըզ
ցանկութի շնութեան, առ'ի ծա
նուցանել մեզ. թէ այսպիսի իցեն
մեղք տարբերք 'ի միմեանց ։

Աշ. Թուի թէ, այս պատուիրան
ոչ արգելուցու զ ցանկութիւն
շնութե. զոր ունել կարէ կինն ըզ
առ այրն այլոյ կնոջ. բայց միայն
զ ցանկութիւն շնութեան, զոր
այր ըզ ունել կարէ առ կինն այ
լոյ առն ։ քանզի ասէ Մի ցան
կա

կանայցես կընոջ այլոց։
Ո՛չ է այդպէս, այլ արգելանի վա-
ցանկութին շնութեն, թէ առն,
թէ կնոջ։ Եւ թէպէտ ասէ, Մի
ցանկանայցես կնոջ այլոց. սա-
կայն՝ որ ինչ ասէ զառնէ, իմանի
եւ զոլ ասացեալ ըզկնոջէն։ զի
՚ն առն իբր ՚ըն պատմականագու-
նոջ. պարունակի եւ կինն։ մա-
նաւանդ՝ ամ որք գիտէ, վատա-
համբաւագոյն գոլ. գոնեա՛ ՚ի մէջ
աշխարհի շնութի կնոջն, ՚ի շը-
նութէ առն. ոչ եւ պարկեշտու-
թե և ամօթխածութե առաւել
գովելի ՚ըն կնոջ. քան ՚ն առն։
Ուրեմն եթէ իցէ արգելեցեալ
առն ցանկալն կնոջ այլոց. առանց
երկբայութե իմիք արգելեցեալ
է եւ կնոջ ցանկալ այլոց արանց։
՚Ի վերոյ ասացեր, թէ ուր ար-
գելանի շնութին, արգելանին
եւ այլք ամենայնք ցեղք մեղաց
մա

մնեղինաց. ըղձամ ուրեմն գիտել
եթէ պարտիցի արդեօք նոյնն իմա
նիլ եւ զ ցանկութենէ:

վ. Ո՛չ գոյ երկբայութիւն ինչ առ
այդ: զի մինչ արգելանի ցանկու
թիւնն շնութեան, իմանին եւ գոլ
արգելեցեալք ցանկութիւնն պոռն
կութեան, եւ համայնից այլոց ան
պարկեշտութեանց: զի նոյն բան է,
բնաւէից այսոցիկ մեղաց:

ա. Ըղձամ գիտել. թէ ո՞ր ցան
կութիւն առ կանայս այլոց իցէ մեղ.
